

Summary

THE MARTYR GHEVONT “YERETZ” WAS A *VARTABED* (5th century)

VERY REV. FR. DAJAD VARTABED YARDEMIAN

This paper illuminates the hierarchical order of the 5th century priest Ghevont “Yeretz”, the pupil of St. Sahag Catholicos and St. Mesrob Mashdots Vartabed. Ghevont “Yeretz” was in reality a celibate priest, doctor in Theology (a Vartabed), and not a married priest as has been commonly referenced recently.

Ghevont was called “Yeretz” as he was the eldest of his seminarian colleagues. Ghevont has been a notorious figure in the literary and educational movement of the 5th century in the life of the Armenian Apostolic Church. He was fluent in Greek and Assyrian.

Ս. ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑՈՒ ԵՐԿԵՐԸ
ՀԱՅՈՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սոյն աշխատասիրութամբ նպատակադրուել ենք ներկայացնել ս. Եւագր Պոնտացու երկերի ողջ այն ժառանգութիւնը, որ տեղ է գտել հայոց դասական մատենագրութեան մէջ: Ժամանակին այսպիսի նախաձեռնութեամբ հանդէս է եկել Մխիթարեան միաբան Հ. Բարսեղ Սարգիսեանը՝ հրատարակելով Եւագրի անունով մեզ հասած բոլոր երկերի համամետական բնագրերն՝ իրեն հասանելի ձեռագրերի հիման վրայ¹: Գիտնական վարդապետը նիւթին նուիրել է աւելի քան 180 (Թ.-ՃՂԲ.) էջերից բաղկացած մեծածաւալ, համակողմանի ներածական-հետազոտութիւն, որի արժէքն առ այսօր շատ առումներով արդիական է: Այսուհանդերձ, այսօր Եւագրի թարգմանական ժառանգութիւնը կարօտ է նոր, մանրակրկիտ ուսումնասիրութեան: Սարգիսեանի գրքի հրատարակութիւնից յետոյ, ժամանակի հետ ի յայտ են եկել յունարէն բնագրեր եւ այլ լեզուներով թարգմանուած նորանոր աղբիւրներ: Մի շարք խոշոր մատենագէտներ աւելի են բարձրացրել Եւագրի գրութիւնների, այդ թւում հայերէն թարգմանութիւնների հետ համեմատական ուսումնասիրութեան նշաձողը: Արդիւնքում արդի հայրախօսական ուսումնասիրութիւնների համակարգում ուրուագծուել է Եւագրի ամբողջական ժառանգութեան համապատկերը՝ ներառելով նաեւ նրա հայերէն թարգմանութեան ենթաբաժինը: Սակայն վերջինս դեռեւս թերի է. հետազոտողների հիմնական աղբիւրը մինչեւ օրս մնում է Բ. Սարգիսեանի հրատարակութիւնը, որն արդէն չի կարող բաւարարել որոշ արդիական հարցադարձումների: Այսօր սուր կարիք է զգացւում համաշխարհային եւագրագիտական հա-

1 Սրբոյ Հօրն Եւագրի Պոնտացոյ Վարժ եւ Մատենագրութիւնք, Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ (այսուհետ՝ ՍԱՐԳԻՍԵԱՆ) (աշխտ. եւ ծնթ.), Վեներաբիլ 1907:

մայնապատկերում օրգանապես ներածելու նրա հայերէն ժառանգութեան ճշգրիտ նկարագիրը, որն, ինչպէս կը տեսնենք առջեւում, մի շարք պատճառներով, բաւական ուրոյն տեսք ունի: Սոյն աշխատութիւնն ըստ էութեան նուիրուած է հէնց այդ նկարագրի ամբողջացմանը, ինչի համար կազմուել են Եւագրի երկերի նոր՝ քննական բնագրեր՝ բազմաթիւ ձեռագրերի համեմատութեան հիման վրայ: Աշխատասիրութեան ընթացքում փորձ է արուել հայերէն թարգմանութիւնը համեմատելու մեզ հասած յունարէն եւ ասորերէն գրութիւնների հետ եւ դրա հիման վրայ ի յայտ բերելու հայերէն թարգմանութեան առանձնայատկութիւնները, որոնք, մեր համոզմամբ, բխում են որոշակի վարդապետական միտուածութիւնից: Զուգահեռ կատարուել է նաեւ ստեղծուած քննական բնագրերի անգլերէն թարգմանութիւնը, ինչը կարելի է վերոնշեալ արդի համաշխարհային եւագրագիտութեան մէջ նրա հայերէն ենթաբաժինը ճշգրիտ ներկայացնելու համար: Սոյն աշխատասիրութիւնը ընդգրկում է նաեւ այն երկերը, որոնք ժամանակին վերագրուել են ս. Նեղոս Սինայեցուն (եւ այդ պատճառով չեն ընդգրկուել Բ. Սարգիսեանի հրատարակութիւնում), բայց, ըստ վերջին մատենագիտական ճշգրտումների, ստուգապէս պատկանում են Եւագրի գրչին²:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայոց այբուբենի ստեղծման ամենավաղ շրջանից ի վեր՝ հայ մատենագրութեան մէջ կենտրոնական դեր է խաղացել յունական եւ ասորական աղբիւրներից թարգմանուած գրականութիւնը³: Այս թարգմանութիւնները զգալիօրէն ձեւաւորել են հայոց գրական եւ աստուածաբանական ասանդոյթների զարգացումը՝ ներառելով հե-

2 Հ. Բ. Սարգիսեանն իր ներածութեան մէջ անդրադառնում է Նեղոսի անուամբ, բայց Եւագրի հեղինակած ենթադրելի երկերին (ԾԶ.-ՂԳ.): Սակայն դրանցից մի քանիսի՝ Եւագրի գրչին պատկանելը հերքուել է արդի մատենագիտութեան մէջ (J. MUYLDERMANS, *S. Nil en version arménienne*, in «Le Muséon. Revue d'Études Orientales» 56 (1943), pp. 77-113):

3 Տե՛ս, օրինակ, E. G. MATHEWS, *Syriac into Armenian: The Translations and Their Translators*, «Journal of the Canadian Society for Syriac Studies» (2010); M. MORAN, *Ancient Armenian Translation from Greek Texts: Questions of Method in Aa.Vv., Greek Texts and Armenian Traditions*, De Gruyter, Berlin; Boston 2016.

ղինակների եւ ժանրերի բազմազան տեսականի: Թարգմանուած աշխատութիւնները, որոնք ընդգրկում են թէ՛ աստուածաբանական, թէ՛ իմաստասիրական գրութիւններ, հիմք են տուել Հայոց Եկեղեցուն զարգացնելու իր ուրոյն դաւանական համակարգը: Այս համակարգը Եկեղեցուն հնարաւորութիւն տուեց դիմակայելու դարաւոր քաղաքական եւ մշակութային մարտահրաւէրներին՝ միաժամանակ պահպանելով իր ինքնութիւնն ու ծաղկումը:

Այդ թարգմանական գրականութեան լայնածաւալ հետազոտութիւններն ու վերլուծութիւնները ոչ միայն լուսաբանում են բարդ եւ նախկինում անորոշ կէտերը, այլեւ առաջարկում են եզակի պատկերացումներ այն դարաւոր հակասութիւնների վերաբերեալ, որոնք կապուած են վաղ հեղինակների եւ Եկեղեցու հայրերի հետ: Բացի այդ, այդ թարգմանութիւններում խիստ արժէքաւոր են այն օրինակները, որոնց բնագրերը կա՛մ կորել են պատմական հանգամանքներով, կա՛մ ոչնչացուել են ենթադրելի հերձուածողական ուսմունքների պատճառով:

Այդպիսի նշանակալից աշխատութիւններից են Եւագր Պոնտացու՝ Դ. դարի Եկեղեցու հայր, խորհրդապաշտ, իմաստասէր եւ աստուածաբան վանականի գրուածքները: Եւագրը մնայուն հեղինակաւորութիւն է պահպանել Հայոց Եկեղեցում, որտեղ մինչ օրս նրան յարգում են որպէս սրբի⁴: Թէեւ նրա սրբադասման ճշգրիտ ժամանակը մնում է անյայտ, բայց, օրինակ, փաստ է, որ ԺԳ. դարի սկզբին Եւագրը ճանաչուել է իբրեւ սուրբ ճգնաւոր. 1215 թուականի մի ծիսական ձեռագրում նրա անունը յիշատակուում է Եգիպտոսի անապատական ս. հայրերի հետ միասին⁵:

Եւագրի ստեղծագործութիւնները լայնօրէն թարգմանուել են հայերէն արդէն Ե. դարում՝ հայոց գրերի ստեղծումից անմիջապէս յետոյ: Այդ մասին են վկայում նրա երկերն ու մեկնութիւնները պարունակող բազմաթիւ ձեռագրեր, որոնք պահպա-

4 Ս. Եւագրի յիշատակը տօնուում է Յիսնակաց պահի երկրորդ Կիրակիին յաջորդող շաբաթուայ ընթացքում: Նրա անունը յիշատակուում է նաեւ ս. պատարագի ժամանակ՝ ի թիւս այլ անապատական հայրերի (*Divine Liturgy*, St. Vartan Press, New York 2005, p. 33).

5 Ռ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, *Հայոց Տօնացոյցը (4-18-րդ դարեր)*, Աստուածաբանութեան Ֆակուլտետի Մատենաշար 2; ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրտ., Երեւան 1999, էջ 421, 483:

նուեւլ են Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում, Մխիթարեան միաբանութեան Վենետիկի եւ Վիեննայի գրադարաններում, Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան ձեռագրատանը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկիա» մատենադարանում եւ այլ հաստատութիւններում, որոնցում պահպանուեալ են հայերէն ձեռագրերի հաւաքածուներ:

Եւագրի ստեղծագործութիւնների մնայուն ժողովրդականութիւնը հայկական աւանդոյթներում կարելի է վերագրել նրա ճգնաւորական ուսմունքին, որ անբաժանելի է վանական կեանքից: Նրա աշխատութիւնները կիրառուել են իբրեւ ուղեցոյցներ եւ կանոններ վանական կեանքի հաստատման ու պատշաճ վարքով ընթանալու համար եւ դարձել են միջնադարեան հայկական վանքերի կրթական ծրագրի հիմնական մասը⁶:

Հայ իրականութեան մէջ Եւագրի գրութիւնների լայն տարածմանը նպաստող գործօններից է նաեւ նրանց նախաքաղկեդոնական ծագումը: Կապադովկիայի հայերի աշխատութիւնների հետ մէկտեղ, Եւագրի գրութեանքները կիրառուել են աստուածաբանական վէճերում, յատկապէս՝ ընդդէմ երկաբնակութեան:

Եւագրի աշխատութիւնները խորապէս նպաստել են հայ վարդապետների փիլիսոփայական եւ աստուածաբանական մտքի ձեւաւարմանը: Նրա երկերի վերաբերեալ մեկնաբանութիւններ են գրել միջնադարեան մի շարք հայ հեղինակներ, որոնց կ'անդրադառնանք առջեւում:

ԵՒԱԳՐԻ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ ՓՈՒԼԵՐԸ

Եւագրի ստեղծագործութիւնները հայերէն են թարգմանուել երկու տարբեր փուլերով: Առաջին փուլը տեղի է ունեցել Ե.-է. դարերում, երբ թարգմանութիւնները հիմնականում կատարուել են յունարէն աղբիւրներից: Որոշ հայ գիտնականներ գտնում են, որ Եւագրի ստեղծագործութիւնների մեծ մասը թարգմանուել է

6 Այս մասին տե՛ս Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, *Յուշիկ՛ հայրենեաց հայոց*, հտ. Բ., Վենետիկ 1869, էջ 287:

հայ գրականութեան «ոսկե դարում»⁷: Հ. Յ. Տաշեանն իր ձեռագրացուցակում Եւագրի թարգմանութիւնները համարում է ստեղծուած «մեսրոպեան ժամանակաշրջանի գերագանց լեզուով»⁸, նկատի ունենալով հայոց գրերի ստեղծող ս. Մեսրոպ Մաշտոցին եւ Ե. դարում հաստատուած թարգմանչական ոճը: Ժամանակակից հայ գիտնականները նոյնպէս հաստատում են, որ Եւագրի որոշ աշխատութիւններ պահպանուել են Ե. դարից: Մ. Աբեղեանն, օրինակ, նշում է, որ Ե. դարի սկզբին առաջին թարգմանիչները՝ Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը եւ նրանց աշակերտները, այդ թւում՝ Յովսէփ Վայոցձորցին, Ղեւոնդը, Կորիւնը եւ Յովսէփ Պաղնկեցին, զգալի ջանքեր են գործադրել եկեղեցական գրականութեան լայն շրջանակ թարգմանելու համար: Ըստ Աբեղեանի՝ «Այս քարգմանութիւններից էին նաեւ Եւագր Պոնտացու գործերը»⁹: Նմանապէս, Լեւոն Տէր-Պետրոսեանն, Աստուածաշնչի հետ մէկտեղ, ամենակարեւոր թարգմանութիւններից է համարում Եւագրի ստեղծագործութիւնները¹⁰:

Ինչպէս նշուեց, Ե. դարում Եւագրի ստեղծագործութիւնների թարգմանութիւնները հիմնականում կատարուել են յունարէն բնագրերից, որոնք այն ժամանակ լայնօրէն տարածուած էին Ընդհանրական Եկեղեցում: Այս ժամանակաշրջանում թարգմանուած գործերից են՝ «Նշանակ յԵգեկիւլէ», «Եթէ ունիցիս ընդ Բելառայր», «Հաւատք որ ի Նիկիա», «Վասն հանդերձից միայնակեցաց», «Գրիստոնէութիւն է հրաման Փրկչին», «Վասն ութ խորհրդոցն», «Վասն ախտիցն»¹¹, «Վասն այնոցիկ որ ընդ Բուն ցնորք անցանեմ», «Վասն հաստատութեան», «Վասն նշանակաց անցաւութեան»¹², «Գիտ-

7 Հ. Գ. ԶԱՐԲԷՍՆԱԼԵԱՆ, *Մատենադարան հայկական քարգմանութեանց նախնեաց (դար Դ.-ԺԳ.)*, Վենետիկ 1889 (այսուհետ՝ ԶԱՐԲԷՍՆԱԼԵԱՆ), էջ 421-424:
 8 Հ. Յ. ՏԱՇԵԱՆ, *Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Վիեննա 1895, (այսուհետ՝ ՏԱՇԵԱՆ), էջ 615:
 9 Մ. ԱԲԵՂԵԱՆ, *Երկեր*, հտ. Գ., Երեւան 1968, էջ 113:
 10 Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ, *Հայ հին քարգմանական գրականութիւն*, Երեւան 1984, էջ 9:
 11 Այս վերնագրով գրութիւնն, իբրեւ առանձին գրական միաւոր, ներկայացուած է միայն Զարբանալեանի ցուցակում (ԶԱՐԲԷՍՆԱԼԵԱՆ, էջ 423):
 12 «Վասն հանդերձից միայնակեցաց»ից մինչեւ «Վասն նշանակաց անցաւութեան» ներառեալ՝ Եւագրի «Practicus» գրութի մասերն են: Հայերէն

նաւոր եւ արդիւնաւոր»¹³, «Առաջին լուսաւոր պատերազմացն», «Վասըն ընդունելութեան», «Վասն պաշտաման»¹⁴, «Ժառանգորդք Աստուծոյ», «Բան խրատու. գերախայրիս կալոյ իմոյ եւ հնձանի», «Ընդդէմ պատասխանի ի Գրոց Սրբոց», «Առ մարտիրոսս», «Վասն յարութեան»: Թէեւ նշեալ վերնագրերը շատ ձեռագրերում ներկայացուած են որպէս առանձին գրական միաւորներ, եւ հայ մատենագէտները յաճախ դրանք համարել են այդպիսին¹⁵, սակայն շատերն իրականում աւելի ընդարձակ ստեղծագործութիւնների ենթավերնագրերն են, ինչը կը դիտարկուի առջեւում:

Հայերէն ձեռագրերում Եւագրիոս վերագրուող աշխատութիւններից մէկի՝ «Ճառ Քրստեայ» վերնագրով երկի թուագրումը մնում է անորոշ: Ենթադրուում է, որ հակիրճ ասոյթներից կազմուած այս գրութիւնը ստեղծուել է Ձ. դարի սկզբին:

Եւագրի հանդէպ ընդհանուր վերաբերմունքը փոխուեց 553 թուականին, երբ Կոստանդնուպոլսի ժողովում նրա գրութիւնները ճանաչուեցին հերձուածողական, ինչը յանգեցրեց նրա շատ բնագրերի ոչնչացմանը: Եւագրի գրչին պատկանող մի շարք կարեւոր երկեր յետագայում վերագրուեցին այլ յայտնի վանականների եւ ուսուցիչների: Օրինակ՝ «Յաղագս ութ խորհրդոց» եւ «Յաղագս աղօթից» երկերը¹⁶, որ յունարէն շրջանառում էին ս. Նեղոս Սինայեցու անունով, հայերէն թարգմանուել են վերջինիս հեղինակութեամբ՝ հաւանաբար Ձ. դարում:

Եւագրի երկերի թարգմանութեան երկրորդ փուլը տեղի է ունեցել ԺԱ. դարից սկսած՝ հիմնականում ասորերէնից¹⁷: Ձեռագ-

ձեռագրերում այս երկն ընդհանուր անուանում չի ունեցել: Յանուն մատենագիտական միեղեկութեան նախընտրելի է այն ներկայացնել «Արդիւնաւոր» անուանմամբ՝ իբրեւ «Practicus»-ի գրաբարեան հումանիշ:

13 Հայոց թարգմանական աւանդութեան մէջ այսպիսի բարդ անուանում ունի Եւագրի «Gnosticus»ը, ինչի պատճառներն առջեւում մանրամասնօրէն կը բնութագրուեն:

14 «Առաջին լուսաւոր պատերազմացն»ից մինչեւ «Վասն պաշտաման» գրութիւնները *Tractatus ad Eulogium* անուանումով երկի մասերն են, որոնք հայոց ձեռագրերում ներկայացուած են իբրեւ առանձին ստեղծագործութիւններ:

15 ՋԱՐԲԶՍՆԱԼԵԱՆ, էջ 421-424, ՏԱՇԵԱՆ, էջ 614-615:

16 Վարք Հարանց, հտ. Բ., Վեներիկ 1855, էջ 641-662, 700-716:

17 E. G. MATHEWS, *Syriac into Armenian: The Translations and their Translators*, «Journal of the Canadian Society for Syriac Studies» 10 (2010), p. 27.

րերի քննութիւնը ցոյց է տալիս, որ Եւագրի գրութիւնները Հայաստանում լայն տարածում են ունեցել ԺԱ.-ԺԳ. դարերում: Սա վկայում է այն մասին, որ, ի տարբերութիւն Բիւզանդական Եկեղեցու, որտեղ Եւագրը դատապարտուել է իբրեւ հերձուածող, Հայոց Եկեղեցին շարունակել է յարգել նրա հեղինակութիւնն՝ իբրեւ սրբի եւ պահպանել նրա ուսմունքն ու ազդեցութիւնը: Այս ժամանակաշրջանում Եւագրի գործերը ոչ միայն աշխուժօրէն կրկնօրինակուում էին, այլեւ կատարուեցին նոր թարգմանութիւններ ասորերէնից՝ նպաստելով, որ նախկինում չթարգմանուած կամ թէրեւս կորսուած աշխատութիւնները եւս ընդգրկուեն Հայոց վարդապետարանում: Այս ընթացքում թարգմանուել է Եւագրի ստեղծագործութիւնների ընդարձակ եւ կարեւոր ընտրանի: Ըստ Յ. Տաշեանի, դրանք ներառում են «Հարիւրաւորք վեցերորդք», «Յիշման Տեառն մերոյ», «Նորին առ աշակերտն», «Նորին յորդորումն», «Բան խրատու միայնակեցաց» երկերը¹⁸, ինչպէս նաեւ՝ «Մեկնէին ուղղուած 30 նամակներ»ը¹⁹:

Այս շրջանում Եւագրի երկերի հանդէպ մեծ հետաքրքրութեան մասին է վկայում այն, որ աւելի քան երեք դար շարունակ (ԺԲ.-ԺԵ.) Հայոց ակաւաւոր վարդապետները մեկնաբանութիւններ են գրել նրա հիմնական աշխատութիւնների մասին: Այսպէս, ԺԲ.-ԺԳ. դարերի նշանաւոր վարդապետ Գրիգոր Մեկնիչը (ոմանք նրան նոյնականացնում են Գրիգոր Գ. Վկայասէր կաթողիկոսի (1113-1166), ոմանք՝ Գրիգոր Սկեւոացու († 1301) հետ) հեղինակել է «Նշանակ յեզեկիլէլ», «Արդիւնաւոր», «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» եւ այլ աշխատութիւնների մեկնութիւնները: ԺԳ.-ԺԴ. դարերում Կիրակոս Երզնկացին մեկնաբանել է «Հարիւրաւորք վեցերորդք»ը եւ «Յաղագս ութ խորհրդոց»ը: Եւագրի երկերի Հայոց մեկնաբանական աւանդոյթին մեծ նպաստ է բերել նաեւ ԺԴ.-ԺԵ. դարերի նշանաւոր գործիչ Մատթէոս Ջուղայեցին²⁰:

18 ՏԱՇԵԱՆ, էջ 617:
 19 *Evagrius Letters in Armenian Translation*, R. DARLING YOUNG – H. KARAPETYAN, (edition, translation and comments), CSCO, Peeters, Louvain 2022: Կարելի է խիստ հաւաստի համարել «Մեկնէին ուղղուած երեսուն նամակների»՝ ԺԱ.-ԺԲ. դարերում թարգմանուած լինելը, քանի որ լեզուաբանական վերլուծութիւնները ցոյց են տալիս այդ դարերում ասորերէնից կատարուած թարգմանութիւնների հանգամանքը (տե՛ս նոյն, 6):
 20 Եւագրի գրութիւնների մեկնութիւնների ամփոփ ակնարկը տե՛ս ՍԱՐԳԻՍԵԱՆ, *Ներածութիւն*, ՃԾԳ.-ՃԾԸ:

Այս ժամանակաշրջանում հայոց գրական վերածնունդն ա-
կընյայտ է՝ պահպանուած ձեռագրերի զգալի թուով: Սա կարելի
է կապել պատմական եւ հասարակական-քաղաքական հանգամանք-
ների հետ: Արաբական արշաւանքները է.-ժ. դարերում, Հայոց
թագաւորութեան անկումը ժԱ. դարում եւ Հայկական լեռնաշ-
խարհում տիրող անորոշ հասարակական-քաղաքական պայմանները
կրօնական առաջնորդներին դրդեցին միջոցներ ձեռնարկել ազգի
հոգեւոր եւ մշակութային արժէքների ամրապնդման համար:
Մաղաքիա Օրմանեանը նշում է. «Քաղաքական անկման պայմաննե-
րում ջանքեր են գործադրուել կանխելու գոնէ կրօնական անկումը: ...
Ինչ-որ կերպ կրկնում էր Սահակ-Մեսրոպի դարաշրջանի երեւոյթը:
Արշակունիների գահակալութեան դադարեցման ժամանակ հայ դըպ-
րութիւնը եւ երանելի թարգմանիչներն էին, որ եղան ազգի պաշտպա-
նութեան երաշխաւորը: Իսկ այստեղ, ազգային իշխանութեան անկման
եւ ազգային Եկեղեցու դէմ լարուած թշնամանքի պայմաններում, նո-
րոգուած կրթութիւնն ու ուղղափառ վարդապետներն էին, որ հանդէս
եկան իրրելու հայադաւան եւ հայածէս Եկեղեցու պաշտպաններ»²¹:

Եկեղեցու դարաւոր դաւանական եւ գրական ժառանգու-
թեան ամրապնդմանը դրդող մէկ այլ գործօն կարելի է համարել
օտարերկրեայ կրօնական շարժումները, որոնք ներթափանցում էին
առանց այն էլ քաղաքական եւ կրօնական առումով ապակայունա-
ցուած երկիր: Այդպիսի ազդեցութիւններից մէկը Կաթողիկէ Ե-
կեղեցու միարարական շարժումն էր, որը սկսուեց ժԲ. դարում՝
խաչակրաց առաջին արշաւանքի հետեւանքով: Այս շարժման նպա-
տակն էր ամբողջ Հայաստանում տարածել եւ պարտադրել Կաթո-
ղիկէ Եկեղեցու դաւանանքը: Այս եւ նման այլ սպառնալիքների
դիմակայելու համար Հայոց Եկեղեցու վարդապետները շատ կրօ-
նական կենտրոններում ու վանքերում սկսեցին թարգմանել եւ
մեկնաբանութիւններ գրել Եկեղեցու նշանաւոր հայրերի, այդ թը-
ւում՝ Եւագր Պոնտացու գրուածքների վերաբերեալ, որոնք արդէն
հայոց մէջ լայն ժողովրդականութիւն էին վայելում:

Միւթար Այրիվանեցու († ~1300) կազմած յայտնի ժողովա-
ծուններից մէկը՝ «Ճառընտիր»ը պարունակում է Եւագրի անուամբ
երկերի հայերէն թարգմանութիւնների ամբողջական հաւաքա-
ծուն²²: Այս ձեռագրում նշուած է, որ թարգմանութիւնները կա-

21 Ազգապատում, § 1387 (ազատ թարգմ. արեւմտահայերէնից):
22 Ձեռ. ՄՄ 1500:

տարել է «Վարդան Վարդապետը»²³: Սա, հաւանաբար, ժԳ. դարի
յայտնի ուսուցիչ եւ թարգմանիչ Վարդան Արեւելցին է († 1271),
որ հռչակուել է նաեւ Մեծն Վարդան եւ Վարդան Պատմիչ պա-
տուանուններով²⁴:

ԵՒԱԳՐԻ ԵՐԿԵՐՆ ԸՍՏ ՀԱՅՈՑ ԱՒԱՆԳԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Եւագրի ստեղծագործութիւնների կառուցուածքը հայոց
թարգմանական աւանդութեան շրջանակում եւ դրանց ներկայա-
ցումը ձեռագրերում լիովին հասկանալու համար անհրաժեշտ է
ուսումնասիրել այդ թարգմանութիւնները՝ հայ աւանդական մա-
տենագիտական դասակարգման ուսանակի միջով: Այս մօտեցումը
ոչ միայն լոյս է սփռում նրա վրայ, թէ իրականում ինչպէս են
ընկալուել Եւագրի աշխատանքները եւ դասակարգուել հայոց աս-
տուածաբանական եւ վանական շրջանակներում, այլեւ թոյլ է տա-
լիս վերակառուցել եւ խաչածեւ յղում կատարել ժամանակակից
մատենագիտական համակարգի հետ, ինչպիսին է Clavis Patrum Grae-
corumը (CPG)²⁵: Հայկական դասակարգման համակարգի համապա-
տասխանեցումը CPG համակարգի հետ՝ հնարաւորութիւն է ստեղ-
ծում աւելի խոր ընկալելու Հայոց Եկեղեցում Եւագրի ստեղծա-
գործութիւնների իւրացման առանձնայատկութիւնները, ինչպէս
նաեւ՝ նոր բացայայտումներ անելու նրա բնագրերի ուսումնասի-
րութեան ասպարէզում:

Ստորեւ Աղիւսակ 1-ում ներկայացուած են Եւագրի աշխա-
տանքներն՝ ըստ հայկական մատենագիտական դասակարգման, ո-
րոնք համապատասխանեցուած են CPGի համարակալման համա-
կարգի հետ՝ իրենց լատիներէն անուանումներով հանդերձ:

23 Անդ, 1041ա:
24 Հայագետ Պ. Անթափեանը շեշտում է Վարդան Արեւելցու թարգմանչա-
կան ջանքերը, ինչպէս նաեւ նրա «երկրորդ թարգմանիչ» լինելու փաստը՝
նշելով, որ նրան համեմատում են Ե. դարի առաջին թարգմանիչների
հետ՝ հայոց գրական ժառանգութեան ստեղծման գործում ունեցած ա-
ւանդի մեծութեամբ: Տե՛ս Ա.ՆԹԱՓԵԱՆ, Փ., Վարդան Արեւելցի, Երեւան
1987, 323:
25 Corpus Christianorum Clavis Patrum Graecorum II/1. Turnhout-Brepolis 2023,
NN° 2430-2484, pp. 248-306.

Աղիւսակ Ա.

Հայկական տարբերակ Clavis Patrum Graecorum

1	Նշանակ յեզեկիէլէ (9-12) ²⁶	Significatio in Ezechielem	CPG 3060
2.1	Վասն հանդերձից միայնակեցաց (22-26)	Practicus	CPG 2430
2.2	Քրիստոնէութիւն է հրաման Փրկչին (26-30)		
2.3	Վասն ութ խորհրդոցն (31-36)		
2.3.1	Վասն ախտիցն (36-41)		
2.4	Վասն այնոցիկ որ ընդ ինն ցնորք անցաննն (41-42)		
2.5	Վասն հաստատութեան (43-44)		
2.6	Վասն նշանակաց անցաւութեան (45-54)		
3	Գիտնաւոր եւ արդիւնաւոր (12-22)	Gnosticus	CPG 2431
4	Ճառ Քրստեայ (54-63)	Capita paraenetica	CPG 2443
		Spiritalis sententiae per alphabeticum dispositae	CPG 2444
		Aliae sententiae	CPG 2445
		Sexti sententiae	CPG 1115
		Sententiae Sexti	CPG 1220
5.1	Առաջին լուսաւոր պատերազմացն (63-93)	Tractatus ad Eulogium	CPG 2447
5.2	Վասն ընդունելութեան (94-107)		
5.3	Վասն պաշտաման (107-113)		
6	Ժառանգորդք Աստուծոյ (114-124)	AD monachos	CPG 2435

26 Աղիւսակում այս եւ յաջորդ թուերը ցոյց են տալիս Հ. Բ. Սարգիսեանի հրատարակութեան էջերը:

7	Բան խրատու (124-128)	De proverbii et eorum expositionibus	CPG 2477
		Rel. Skemmata	CPG 2433
8	Առ մարտիրոսս (128-129)	Fragmenta armeniaca	CPG 2481(2)
9	Վասն յարութեան (130-131)		
10	Եթէ ունիցիս ընդ ինն եղբայր (131-134)	Syntagma ad monachos recensio i	CPG 2264 CPG 2481(2)
11	Հաստք որ ի Նիկիա (134-141)	Didascalia CCCXVIII patrum Nicaenorum	CPG 2298
		Syntagma ad monachos recensio I	CPG 2264
12	Ընդդէմ պատասխանի ի Գրոց Սրբոց (217-323)	Antirrheticus	CPG 2434
13	Ի կարենլ գովելեան որովայն (VP ²⁷ 641-662)	De octo spiritibus	CPG 2451
14	Խրատք առ ճգնաւորսն (VP 672-673)	Capita paraenetica (Sent Alph 1, 1-24)	CPG 2443 ²⁸
15	Խրատք որք կրօնաւորիլ կամին (VP 692-699)	Capita paraenetica (Sent 25-139)	CPG 6583
16	Յաղագս աղօթից (VP 700-716)	De oratione	CPG 2452
17.1	Հարիւրաւորք վեցերորդք (143-207)	Kephalaia Gnostica	CPG 2432

27 VPով ներկայացուած թուերը հետեւեալ հրատարակութեան էջերն են. Վարք սրբոց հարանց եւ ճաղաճալարութիւն նոցին՝ ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հտ. Բ., Վենետիկ 1855: Տուեալ երկերի՝ Եւագրիս պատկանելու մասին տե՛ս J. MUYLDERMANS, S. Nil en version arménienne, «Le Muséon. Revue d'Études Orientales», 56 (1943), pp. 83-86, 99-100:

28 14րդ եւ 15րդ համարներով ներկայացուած հայերէն թարգմանութիւնները լիովին համապատասխանում են PG 79ի 1249-1262 սիւնակներում գետնդուած *Capita Paraenetica* վերտառութեամբ գրութեանը, բայց արդի մատենագիտութեան մէջ նրա 1-24՝ այբբենական կարգով գլուխները, հայերէն տարբերակի նման, ընկալւում են որպէս առանձին գրութիւն:

17.2	Պակասոսի հարիւրեկացն (207-216)	Capita cognoscitiva	VS 509 ²⁹
		Rel. Skemmata	CPG 2433
		De perfectione	CPG 2476
18	Յիշման Տեառն մերոյ (325-326)	Fragmenta armeniaca	CPG 2481(2)
19	Նորին առ աշակերտն (327-328)	Colloquium magistri cum discipulo eius	CPG 2470 CPG 2481(2)
20	Նորին յորդորումն (328-329)	Fragmenta armeniaca	CPG 2481(2)
21	Բան իրատու միայնակեցաց (329-334)	Rerum monachalium rationes	CPG 2441 CPG 2481(2)
22 ³⁰	Մելիմեի ուղղուած 30 նամակներ (334-376)	Epistulae	CPG 2437
		Ad virginem	CPG 2436
		De magistris et discipulis	CPG 2449
		De perfectione	CPG 2476
		De seraphim	CPG 2460
		Principium scientiale veritatis	VS 509

Աղիւսակում Եւագրի երկերի հայերէն թարգմանութիւններն, ինչպէս նշել ենք վերեւում, ներկայացուած են ըստ հայոց աւանդական մատենագիտական դասակարգման: Այսպիսին է Եւագրի գործերի ընդհանուր պատկերը ձեռագրերում, եւ այսպէս էլ այն սովորաբար արտացոլուած է նրա գրութիւնների հայկական մատենագիտութեան մէջ:

29 VSով ներկայացուած են Եւագրի վերագրուող այն գրութիւնները, որոնք գտնուում են *Vaticanus syriacus* 509 ձեռագրում, եւ դեռեւս չեն ընդգրկուել CPGում: Այս գրութիւնները յայտնաբերել եւ հայերէնի հետ նայնականցրել է Ջ. Միլդերմանսը (J. MUYLDERMANS, *Évagre le Pontique: Les Capita cognoscitiva dans les versions syriaque et arménienne*, «Le Muséon. Revue d'Études Orientales», 47 (1934) pp. 76-79):

30 Այս բուհամարը բաղկացած է եւթահամարներից՝ 22.1, 22.2, 22.3 եւ այլն: Բայց, քանի որ ներածութեան վերջում ներկայացուելու է Եւագրի նամակագրութեան ամբողջ համակարգը՝ համապատասխան աղիւսակով հանդերձ, որոշեցինք սոյն աղիւսակը չծանրաբեռնել՝ գետեղելով միայն նամակների խմբի ընդհանուր բուհամարը:

Աղիւսակի առաջին սիւնակի 1-12 թուահամարներ հիմնականում ներկայացնում են հայերէն թարգմանութեան ոսկէ դարաշրջանը՝ Ե. դարը: 13-16ը Եւագրի այն գործերն են, որոնք վերագրուել են Նեղոս Սինայեցուն (ամենայն հաւանականութեամբ դրանք թարգմանուել են Զ.-է. դարերում): Իսկ 17-22 թուահամարները ներկայացնում են ԺԱ.-ԺԴ. դարերում թարգմանուած երկերը:

Հարկ է նշել, որ հայկական տարբերակի ցանկում ոչ բոլոր վերնագրերն են ներկայացնում ամբողջական ստեղծագործութիւններ: Ինչպէս արդէն գրել ենք, երբեմն դրանք մէկ ստեղծագործութեան միայն մի հատուածի ենթավերնագրերն են: Այնուամենայնիւ, քանի որ այս բաժինները շատ ձեռագրերում ընդօրինակուել եւ ներկայացուել են իբրեւ առանձին գրուածքներ, հայոց մատենագէտները նախընտրել են դրանք ներկայացնել որպէս առանձին մատենագրական միաւորներ: Այսպիսի մօտեցումը կարելի է պատշաճ համարել, եթէ նկատի ունենանք, որ դա դարաւոր աւանդույթ է եղել, մանաւանդ որ Եւագրի միջնադարեան հայ մեկնաբանները երբեմն նոյնպէս այդ բաժիններին վերաբերուել են որպէս առանձին կամ աւարտուն գրութիւնների: Այս իսկ պատճառով անհրաժեշտ գտանք, որ այդ մասերը, իբրեւ առանձին մատենագիտական միաւորներ, պէտք է ունենան իրենց ուրոյն թուահամարները: Բայց, քանի որ դրանք իրականում որոշակի երկերի մասերն են, դրանց համար օգտագործել ենք կոտորակային թուեր:

Աղիւսակում նկատելի է նաեւ հակառակ պատկերը՝ երբ հայկական տարբերակի ցանկում մէկ վերնագրով ներկայացուած երկի անուան դիմաց գետեղուած են մէկից աւելի երկերի անուններ եւ թուահամարներ (տե՛ս 4, 7, 11, 22 թուահամարները): Սա այն դէպքն է, երբ հայոց աւանդութեամբ ներկայացուող ստեղծագործութիւնը համարուում է մէկ ամբողջական գրական միաւոր, մինչդեռ իրականում հանդիսանում է տարբեր երկերի իւրայատուկ բանաբաղուածութիւն-համադրում:

Եւագրին վերագրուող երկերի ոչ բոլոր հայերէն թարգմանութիւններն են նոյնականացուած (եւ, ի մասնաւորի, CPGում գրանցուած) նրա հեղինակութեամբ համընդհանուր ճանաչում ստացած գործերի հետ: Այս հանգամանքը եւս արտացոլուած է Աղիւսակ Ա.-ում: Աղիւսակի նախավերջին սիւնակում կարող ենք տեսնել մի քանի անգամ նշուած *Fragmenta armeniaca* անուանումը (տե՛ս թուահամարներ 8, 9, 18, 20), որոնց դիմաց՝ վերջին սիւնակում, գրուած է CPG 2481(2): Սրանք այն երկերն են, որոնք CPGում, վերոնշեալ վերնագրով ներկայացուած են որպէս հայոց գրական բեկորներ, որանք համարուում են կա՛մ անվաւեր, կա՛մ էլ

դեռեւս նոյնականացուած չեն համապատասխան բնագրերի հետ³¹: Բայց աղիւսակում նոյն՝ 2481(2) թուահամարը հանդիպում է նաեւ որոշակի անունով բնագրային աղբիւրի դիմաց եւ՝ CPGի այլ թուահամարի հետ միասին (տե՛ս հայերէն տարբերակի թուահամարներ 10, 19, 21): Այս դէպքում հայերէն թարգմանութիւնը մատենագիտական ուսումնասիրութիւններում արդէն նոյնականացուած է բնօրինակ համարուող երկի հետ, սակայն՝ որաշակիօրէն մնալով իբրեւ բեկոր կամ ոչ ամբողջական գրութիւն:

Յաւելենք, որ այս դասակարգումը էական յղում է հանդիսանում ժամանակակից գիտնականներին՝ կամուրջ ապահովելով հայոց ձեռագրային ականդութեան եւ ժամանակակից մատենագիտութեան միջեւ: Այն խորացնում է Եւագրի ժառանգութեան ուսումնասիրութիւնը՝ լոյս սփռելով տեքստային փոխանցման պատմական զարգացման եւ հայկական համատեքստում աստուածաբանութեան, ձգնաւորական գիտելիքի եւ ձեռագրային ականդութեան բարդ փոխազդեցութեան վրայ: Այսու առաջարկում ենք ներկայացուած թուահամարներն ընդհանուր մատենագիտութեան մէջ, CPGի թուահամարների հետ զուգահեռ, այսուհետ վերջնական նապէս ամրագրել որպէս համապատասխան երկերի հայկական տարբերակի նոյնականացման քուեր (ID):

ԵՒԱԳՐԻ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ՝ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Եւագրի ստեղծագործութիւնների հայերէն թարգմանութիւնները ստորեւ՝ Աղիւսակ 2ում դասակարգել ենք արդէն ըստ CPG համակարգի եւ, բնականաբար, այն կառուցուել է CPGում ընդունուած թուահամարների յաջորդականութեամբ: Բայց, ինչպէս նկատուում է, այդ յաջորդականութիւնն աղիւսակում որոշակիօրէն խախտուել է, եւ առաջացել են մի քանի խմբեր: Թէեւ այդ խմբերն աչքի են ընկնում թեմատիկ տարբերութեամբ, բայց դրանք առաջացել են ո՛չ միայն թեմատիկ դասակարգման միտումից, այլեւ երկու համակարգերի՝ CPGի եւ հայոց ձեռագրային ականդական կառուցուածքների համեմատական վերլուծութեան արդիւնքում եւ փաստօրէն արտացոլում են այդ կառուցուածքների հիմնական տարբերութիւնները:

31 Corpus Christianorum Clavis Patrum Graecorum II/1, 303.

Աղիւսակ Բ.

Խումբ Ա.	Clavis Patrum Graecorum	Հայկական տարբերակ
CPG 3060	Significatio in Ezechielem	Նշանակ յեգեկիէլէ (1)

Խումբ Բ.

CPG 2430	Practicus	Եւագրեայ առ Անատոլ (2) ³²
CPG 2431	Gnosticus	Գիտնաւոր եւ արդիւնաւոր (3)
CPG 2432	Kephalaia Gnostica	Հարիւրաւորք վեցերորդ (17.1)
NO CPG VS 509	Capita cognoscitiva sancti Mar Evagrii ³³	Պակասն հարիւրեկացն (17.2)
	Principium scientiae veritatis ³⁴	
	Ejusdem Mar Evagrii capita cognoscitiva ³⁵	
CPG 2476 VS 509	De perfectione ³⁶	Բան խրատու (7)
CPG 2433	Skemmata	
CPG 2477	De proverbiis et eorumdem expositionibus	

32 Սոյն աղիւսակի ինչպէս այս անուանումը, այնպէս էլ թուահամարը (ամբողջական, այլ ոչ թէ կոտորակային տեսքով) բացակայում է նախորդում, քանզի այն, իբրեւ այդպիսին, գոյութիւն չունի հայոց ձեռագրային ականդութեան մէջ: Այս մասին մանրամասն շարադրուած է աղջեւում:

33 *Vaticanus syriacus* 509, pp. 92b-93a (J. MUYLDERMANS, *Évagre le Pontique: Les Capita cognoscitiua dans les versions syriaque et arménienne*, «Le Muséon. Revue d'Études Orientales», 47 (1934), p. 77).

34 *Vaticanus syriacus* 509, 93a-93b.

35 *Vaticanus syriacus* 509, 94a-96a.

36 *Vaticanus syriacus* 509, 96a-97a.

Խումբ Գ.

CPG 2434	Antirrheticus	Ընդդեմ պատասխանի ի Գրոց Սրբոց (12)
CPG 2435	Sententiae ad monachos	Ժառանգորդի Աստուծոյ (6)
CPG 2443	Capita paraenetica (Sent Alph 1, 1-24)	Խրատք առ ճգնաւորսն (14)
CPG 6583	Capita paraenetica (Sent 25-139)	Խրատք որք կրօնաւորիլ կամին (15)
CPG 2443	Capita paraenetica	աննչ. Ճառ Քրստեայ (4)
CPG 2444	Spiritalis sententiae per alphabeticum dispositae	
CPG 2445	Aliae sententiae	
CPG 1115	Sexti sententiae	
CPG 1220	Sententiae Sexti	
CPG 2447	Tractatus ad Eulogium	Առաջին լուսաւոր պատերազմացն (5.1-5.3)
CPG 2451	De octo spiritibus malitiae	Ի կարնել զմոլեկան որովայն (13)
CPG 2452	De oratione	Յաղագս աղօթից (16)

Խումբ Դ.

CPG 2437	Epistulae	Մելիմեթին ուղղուած նամակներ (22)
CPG 2436	Ad virginem	Վասն կուսանաց (22.22) ³⁷
CPG 2449	De magistris et discipulis	Առաջնորդաց եւ աշակերտաց (22.23)
CPG 2476	De perfectione	[Թուղթ] Բասնորդոյ չորրորդ (22.24)
CPG 2460	De seraphim	Վասն սերափից (22.25)
NO CPG VS 509	Principium scientiae veritatis	[Թուղթ] Երեսներորդ (22.30)

37 Այս եւ սոյն խմբի յաջորդ երկերն առանձին գրութիւններ են, որոնք իբրեւ նամակագրութեան մաս են ներկայացուած հայոց թարգմանական աւանդութեան մէջ: Հ. Բարսեղ Սարգիսեանի հրատարակութեան մէջ այս երկերը գրադեցնում են 355-364 եւ 374-376 էջերը:

Խումբ Ե. CPG 2481(2) (Fragmenta armeniaca)

		Առ մարտիրոսս (8)
		Վասն յարութեան (9)
		Յիշման Տեառն մերոյ (18)
CPG 2470	Colloquium magistri cum discipulo eius	Նորին առ աշակերտն (19)
		Նորին յորդորումն (20)
CPG 2441	Rerum monachalium rationes	Բան իրատու միայնակեցաց (21)
CPG 2298	Didascalia CCCXVIII patrum Nicaenorum	Հաւատք որ ի Նիկիա (11)
CPG 2264	Syntagma	Եթէ ունիցիս ընդ քեւ եղբայր (10)

Ստորեւ հակիրճ կը պարզաբանենք աղիւսակում ներկայացուած խմբերից իւրաքանչիւրի մատենագիտական նշանակութիւնը՝ անդրադառնալով նաեւ նրանց թեմատիկ տարբերութեանը:

Սուրբգրային մեկնաբանութիւն (Խումբ Ա.)

Այս պայմանական խումբը ներառում է «Նշանակ յԵգեկիէլէ» երկը, որը CPGում ընդգրկուած չէ Եւագրի երկերի շարքում եւ այս պատճառով աղիւսակում առանձնակի եւ եզակի դիրք է զբաղում: Բայց այս երկի առանձնակի կարգավիճակը կապուած է նաեւ նրա հետ, որ այն հայերէն թարգմանութիւններում Եւագրի միակ սուրբգրային մեկնաբանութիւնն է, իսկ նրա ճգնաւորական եւ խորհրդապաշտական գրութիւնների համար հանդէս է գալիս որպէս իւրօրինակ նախահիմք եւ նախերգանք: Աւելի մանրամասն այն կը վերլուծուի սոյն ներածութեան յաջորդ բաժնում:

Ճգնաւորական եւ խորհրդապաշտական երկեր (Խումբ Բ. եւ Գ.)

Այս խմբերը ներկայացնում են Եւագրի ճգնաւորական եւ խորհրդապաշտական ուսմունքների հիմնարար գրութիւնները, որոնք բաժանել ենք երկու մասի՝ ելնելով մի շարք նկատառումներից: Այսպէս, առաջին խումբն ըստ էութեան ներկայացնում է Եւագրի ընդհանուր մատենագիտութեան մէջ յայտնի նշանաւոր եւագրութիւնը՝ կազմուած «Արդիւնաւոր», «Գիտնաւոր» եւ «Հա-

րիւրաւորք վեցերորդք» երկերից: Բայց այն, ինչպէս տեսնում ենք, հայոց աւանդութեան առանձնայատկութեան պատճառով, որոշակիօրէն ընդլայնուել է, ինչի պատճառը առջեւում կը բացատրուի՝ յատուկ աղիւսակով հանդերձ:

Ինչ վերաբերում է յաջորդ խմբին (Գ.), ապա նրանում ներկայացուած երկերը ո՛չ CPGի, ո՛չ էլ հայոց աւանդական համակարգերում չեն կրում որեւէ կառուցուածքային ընդհանրութիւն եւ կարելի է ասել, որ նրանց առանձին խմբի է վերածել հէնց այդ հանգամանքը: Այս պատճառով դրանք պարզապէս ներկայացուած են CPGի թուահամարային հերթականութեամբ: Այսուհանդերձ հարկ է նշել, որ, թեմատիկ առումով, այս խումբը նախորդի հետ ամբողջացնում եւ կազմում է Եւագրի ճգնաւորական եւ խորհրդապաշտական եւ առհասարակ քրիստոնէական բարեպաշտութեան սկզբունքներն ընդգրկող ուսմունքների ամենակարեւոր շարադրանքը՝ նրա հայերէն ժառանգութեան մէջ:

Նամակագրութիւն Մելիսէի հետ (խումբ Դ.)

Այս խմբում ներառուած են Եւագրի եւ Մելիսէ տիկնոջ միջեւ ենթադրելի թղթակցութիւն ներկայացնող գրութիւններ, որոնք մանրամասն կը դիտարկենք առանձին վերլուծութեամբ եւ աղիւսակով: Բայց այստեղ հարկ է նշել, որ այդ գրութիւններից հինգը խիստ տարբերում են «թղթակցութեան» ընդհանուր ոճից, ունեն առանձին վերնագրեր եւ համապատասխանում են Եւագրի՝ այլ լեզուներով պահպանուած համանուն երկասիրութիւններին: Անյայտ պատճառով հայոց աւանդութիւնը դրանք ներառել է Եւագրի եւ Մելիսէի նամակագրութիւն մէջ: Ենթադրելի է, որ դա կատարուել է վանական կեանքին վերաբերող մէկ ընդհանուր եւ ամբողջական ուսուցանութիւն ներկայացնելու միտումով³⁸:

Խումբ 5. Հայկական բեկորներ (CPG 2481(2))

Հինգերորդ խումբը CPG 2481(2)ում ներկայացուած, այսպէս կոչուած հայկական բեկորներ (Fragmenta armeniaca) են: Սրանցից չորսը («Առ մարտիրոսս», «Վասն յարութեան», «Յիշման Տեառն մերոյ», «Նորին յորդորումն») մինչ այսօր չեն յայտնաբերուել այլ լեզուով, եւ նրանց՝ Եւագրի գրչին պատկանելը խիստ թէական է համարում: Կասկածելի է հեղինակութիւնը նաեւ այս խմբի երկու

38 Evagrius Letters in Armenian Translation, op. cit., p. 18.

երկերի («Հաւատք որ ի Նիկիա» եւ «Եթէ ունիցիս ընդ քեւ եղբայր»), որոնք մատենագիտների ջանքերով նոյնականացուած են յունարէն պահպանուած բնագրերի հետ, բայց զետեղուած են CPGի ո՛չ թէ Եւագրին, այլ ս. Աթանաս Ալեքսանդրացուն վերագրուող երկերի շարքում: Մինչդեռ խմբի մնացած երկու երկերը («Նորին առ աշակերտսն» եւ «Բան խրատու միայնակեցաց») աներկբայօրէն Եւագրին են եւ նոյնական՝ մեզ հասած գրեթէ համանուն ասորերէն եւ յունարէն երկերի հետ: Այսուհանդերձ, այս երկերն աղիւսակում ներկայացնում ենք նոյն խմբի մէջ՝ մի կողմից՝ պահպանելու համար CPGի համակարգը, միւս կողմից՝ ելնելով այն հանգամանքից, որ նրանց եւ դեռեւս չնոյնականացուած երկու բեկոր-գրութիւնների («Յիշման Տեառն մերոյ» եւ «Նորին յորդորումն») միջեւ նրկատու է խոր իմաստային կապ: Բացի այդ, օրինակ, «Բան խրատու միայնակեցաց»ի հայերէն տարբերակն ամբողջական չէ, ինչը ստիպում նրան թողնել Fragmenta armeniaca-ում: Այս ամէնը մանրամասնօրէն կը քննարկուի իր տեղում:

Արձանագրենք, որ վերոնշեալ բեկորների ընդօրինակման հանգամանքն ընդգծում է Եւագրի ուսմունքը պահպանելու յանձնառութիւնը՝ նոյնիսկ երբ հասանելի են միայն նրա մասնակի գրութիւնները, եւ ցոյց տալիս այն նախանձախնդրութիւնը, որ ունեցել է Հայոց Եկեղեցին Եւագրի ազդեցութիւնը վառ պահելու մէջ:

Նախքան նշեալ երկերի թարգմանութիւններից իւրաքանչիւրի քննական բնագրերը ներկայացնելը, ստորեւ կը կատարենք նրանց մատենագիտական քննութիւնը՝ ընդհանուր կառուցուածքային եւ համատեքստային վերլուծութեամբ:

1. Նշանակ յեզեկիէլ³⁹

Σημασια εις τον Ίεζεχιηλ, Significatio in Ezechielem⁴⁰

Այս երկը սովորաբար վերագրում է ս. Գրիգոր Աստուածաբանին⁴¹, սակայն հայոց մատենագրութեան մէջ այն ի սկզբանէ համարում է Եւագրինը: Երկի հրատարակիչ Բ. Սարգիսեանը վստահ է, որ այն սխալմամբ է վերագրուել ս. Գրիգոր Նազիան-

39 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 9-12:

40 J. BILLIUS - C. MORELLUS, Sancti Patris nostri Gregorii Nazianzeni Theologi Opera, Paris 1690, pp. 723-724.

41 Անդ:

զացուն՝ ելնելով նրանից, որ Եւագրին նգովելուց յետոյ, նրա շատ արժէքաւոր երկեր սկսեցին վերագրել այլ հեղինակաւոր հայրերի: Նա վկայակոչում է ս. Հերոնիմոսին, ով ժամանակին կարծիք է յայտնել, որ այս տեքստը չէր կարող է պատկանել ս. Գրիգոր Աստուածաբանի գրչին⁴²: Սոյն ոչ մեծ երկը, մեր կարծիքով, իսկապէս կարելի է ներառել Եւագրի, այսպէս կոչուած, սխոլիաների՝ Սուրբ Գրքի մեկնաբանութիւնների շարքում, քանի որ բնոյթով հակիրճ է՝ բաղկացած կարճ ասոյթներից (ինչը շատ բնորոշ է Եւագրին) եւ բովանդակութեամբ բաւական մօտ է անտիկ փիլիսոփայական դպրոցներին: Թէ որքանով է սա համոզիչ, իհարկէ, կախուած է երկի տեքստաբանական վերլուծութիւնից: Սոյն աշխատութեան սահմաններում չենք կարող ծաւալուել նման վերլուծութեամբ, բայց կարծում ենք, որ կարելի է «Նշանակ յԵգեկիէլ» երկն ընդգրկել այն գործերի շարքում, որոնք կարող են վերագրուել Եւագրի գրչին:

Ինչ վերաբերում է «Նշանակ»ի հայերէն թարգմանութեանը, ապա պէտք է ասել, որ այն հայկական մատենագրութեան մէջ աւանդաբար համարուել է Եւագրի հեղինակած գրքի առաջին երկը, եւ դա, ինչպէս կը տեսնենք առջեւում, ծանրակշիռ պատճառ ունի: Ինչպէս գրում է Գրիգոր Մեկնիչը, երկի վերնագիրը մեզ յուշում է, որ այն Եգեկիէլի տեսիլքի մասնակի-այլաբանական մեկնաբանութիւնն է՝ ըստ ճգնաւորական-բարեպաշտական սկզբբունքների: Թէեւ տեսիլքը ներկայացնում է Աստուծոյ եւ Նրան մերձ գտնուող երկնային գորութիւնների փառքը⁴³, սակայն Եւագրը նրանում տեսնում է մարդկային բնութեան կամ հոգու այն վիճակը, երբ այն, զարդարուած առաքինութիւններով, իր մէջ կըրում է Արարչին եւ իւրօրինակ կառք է հանդիսանում Նրա համար: Թերեւս սա է պատճառը, որ մեկնութիւնը չի ընթանում ըստ Եգեկիէլի գրութեան հերթականութեան, այլ սկսում է՝ առաջին հերթին անդրադառնալով չորս կենդանիների պատկերներին (վերջիններս ներկայացնելով որպէս չորս գլխաւոր առաքինութիւնների խորհրդանիշներ) եւ յետոյ՝ միայն՝ Եգեկիէլի տեսիլքում աւելի առաջ նկարագրուած պատկերները մեկնաբանելուն: Կարելի

42 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 9:
 43 Այս մասին վկայում է հէնց ինքը՝ Եգեկիէլ մարգարէն՝ իր գրքի 10րդ գլխում, որտեղ կրկնում է գրեթէ նոյն պատկերը, իսկ քառուկէն դանիների փոխարէն գործածում է «Բերովքէ» անուանումը (Եգ ժ,14):

է ասել, որ առհասարակ մեկնաբանող պատկերների հերթականութիւնը հեղինակը շարադրել է ո՛չ թէ ըստ տեսիլքի, այլ՝ ուրոյն տրամաբանութեամբ:

Հարկ է նշել այս երկի բովանդակութեան եւս մի արտառոց առանձնայատկութեան մասին. այն անսպասելիօրէն կարծես թէ շեղում է մեկնաբանութիւնից, եւ գրութեան մնացած՝ մօտ 1/3 մասը ծաւալուում է այլ խնդրի շուրջ՝ կապուած մարդու սրբագործուելու եւ աստուածանման դառնալու, ճգնութիւններին բնորոշ չարչարանքների, կամքի ազատութեան եւ այլ սկզբունքների հետ: Այդ ընթացքում հեղինակն անդրադառնում է սուրբգրային անձանց՝ Յուդային, Եսայուն եւ Մովսէսին, Հակաքրիստոսին եւ, վերջում՝ Դանիէլի գրքի երեք մանուկներին՝ նշելով, որ նրանք նախ աշակերտել են Երեմիա մարգարէին, ապա՝ Դանիէլին, ինչով էլ աւարտուում է երկը:

Գրութեան այսպիսի, առաջին հայեացքից տարօրինակ կառուցուածքը՝ պատումի անսպասելի փոփոխութեամբ, ստիպում է նրան այնքան էլ լուրջ չվերաբերուել, մանաւանդ որ երկի հեղինակութիւնը վիճարկելի է: Եւ կարծես թէ արդի ընդհանուր մատենագիտութեան մէջ այդ երկի հանդէպ վերբերմունքը հէնց այդպիսին է: Սակայն հայոց վարդապետարանում այս ստեղծագործութիւնը ոչ միայն աներկբայօրէն համարուել է Եւագրինը, այլեւ նրա գետեղուած լինելը սուրբ հօր գրութիւնների շարքի ամենասկզբում, առիթ է տուել նրան յատուկ ուշադրութիւն ընձեռելու: Ըստ հայ մեկնաբանների, այս փոքրիկ մեկնողական երկը ժողովածույում պատահական չի նախորդում Եւագրի միւս գրութիւններին, այլ հանդէս է գալիս իբրեւ իւրօրինակ նախաբան եւ մեկնարկային հիմք՝ միայնակեացների ճգնաւորական եւ խորհրդապաշտական կեանքի կարգաւորման համար: Ուշագրաւ է, որ հէնց այս համատեքստում էլ բացատրուում է երկի տարօրինակ կառուցուածքը եւ զարգացումը. Եգեկիէլի տեսիլքի խորհրդանիշների հակիրճ բացատրութիւններից յետոյ Եւագրն իր խօսքը զարգացնում է այն հիմնական սկզբունքների շուրջ, որոնք խիստ անհրաժեշտ են ճգնաւորական կեանքի նախահիմքերն ամրացնելու համար: Ամէնից առաջ դա տաժանակիր ճիգերի անհրաժեշտութեան գիտակցումն է, ինչով միայն կարող են ձեռք բերուել գլխաւոր առաքինութիւնները, եւ ինչով էլ մարդը տարբերուում է երկնային գորութիւններից, որոնք առանց տանջանքի, ի սկզբանէ աստուա-

ծապաշտութիւնն ընտրելու շնորհիւ, զարդարուած են այդ առաքիւնութիւններով: Յաջորդ սկզբունքը վերաբերում է մարդու աստուածանալուն, որ ճգնաւորութեան վերջնական նպատակն է ու ճգտումների բարձրակէտը, եւ որով մարդը նմանում է երկնային էակներին: Եւ այստեղ ի յայտ են գալիս տարակոյսներ, թէ որքանով եւ ինչպէս է դա մարդու համար հասանելի: Սովորաբար ենթադրում է որ բոլոր նրանք, ովքեր նշանաւորուել են մեծամեծ շնորհներով (ինչպիսիք էին Մովսէսը եւ այլ մեծ մարգարէներ), պարզապէս ընտրուած եւ նախասահմանուած են եղել Աստծոյ կողմից: Մինչդեռ Եւագրը ցոյց է տալիս, որ նրանցից իւրաքանչիւրը ոչ միայն սեփական կամքով է նախընտրել հնազանդուել Աստծուն, այլեւ դիմել է անօրինակ սխրանքների ու ճգնութիւնների: Իսկ Աստուածորդու մարմնանալուց յետոյ նման ճանապարհով գնալը աւելի քան հասանելի է շատերին, մանաւանդ ճգնաւորական կեանք վարողներին: Ուստի եւ իւրաքանչիւր միայնակեաց պէտք է ձգտի այդ շնորհներին՝ նոյնպիսի սխրանքներով: Վերջապէս Եւագրը յատուկ անդրադառնում է նաեւ այն սուրբգրային անձանց, ովքեր «կորստեան որդիներ» են համարուում եւ դարձեալ շեշտում է, որ նրանք եւս ո՛չ թէ նախասահմանութեամբ, այլ սեփական կամքի կորուստեամբ են նախընտրում չարը եւ մեղքը, եւ այդպիսին են անգամ Յուդան ու Հակաբրիստոսը: Եւ ինչպէս որ մարդու հոգու զօրութիւնները, ճիշտ ուղղութեան վրայ դրուելով, նրան դարձնում են աստուածաման, այդպէս էլ նոյն զօրութիւնները, յանձնուելով մեղքին ու չարին՝ նրան վերածում են դեւերի բնակարանի եւ դատապարտում յաւիտենական կորըստեան:

Այսպիսով, ըստ հայ մեկնիչների, «նշանակ յեզեկիէլէ» երկը, իր արտառոց կառուցուածքով ու ներքին իմաստով, բովանդակում է այն նախահիմքը, որով պէտք է միայնակեացը մեկնարկի իր բարեպաշտութիւնն ու ճգնաւորական կեանքը: Եւ այս իսկ պատճառով, այդ կեանքին վերաբերող ժողովածուն սկսում է այս երկով՝ ի սկզբանէ ցոյց տալու համար, թէ վանականն, ինչպէս գրում է մեկնիչը, «իմչպիսի Աստծոյ կառք պէտք է պատրաստի ինքն իրեցից»՝ ձգտելով հոգու հիմնական ուժերը զարդարել գլխաւոր առաքիւնութիւններով⁴⁴:

44 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 10:

2. Եւագրեայ առ Անատոյ⁴⁵
 Λόγος πρακτικός, Practicus et epistula ad Anatolium⁴⁶

Թէեւ տուեալ երկը հայերէն թարգմանական աւանդութան մէջ ընդհանուր վերնագիր չունի, բայց, որքանով որ լիովին համապատասխանում է «Praktikos»ին, անհրաժեշտութիւն է զգացուում այն արձանագրել որոշակի անուանումով: Կարելի է ասել, որ այս խնդիրն աւանդաբար լուծուած է Եւագրի մեկնիչների մօտ, որոնք կիրառում են «Արդիւնական» կամ «Արդիւնաւոր» անուանումները⁴⁷, եւ վերջինս մեր կողմից արդէն կիրառուել է⁴⁸ եւ կը կիրառուի: Բայց բնագրային հարազատութեան համար նախընտրեցինք գործածել վերնագրի ձեռագրային տարբերակներից մէկի սկզբնամասը⁴⁹, ինչով մի կողմից շրջանցել ենք նրա՝ միայն երկի առաջին՝

45 Անդ, էջ 22-26: Տե՛ս նաեւ I. HAUSHERR, *Les versions syriaque et arménienne d'Évagre le Pontique*, «Orientalia Christiana», XXII (1931), 2, pp. 100-106: Հ. Բ. Սարգիսեանի հրատարակած բնագրում այս երկը ներկայացուած է «Եւագրեայ» վերնագրով, բայց տողատակում նշուած են նաեւ երկու այլ ձեռագրային տարբերակներ՝ «Եւագրեայ առ Անատոյ վասն հանդերձից միայնակեաց», «Եւագրեայ՝ վասն զգեստու սուրբ հարցն»: Եթէ վերջիններս միանշանակ վերաբերում են «Practicos»ի առաջին՝ ներածական բաժնին, ապա «Եւագրեայ» անորոշ անուանումը թերեւս կարելի է վերագրել ամբողջ երկին (գուցէ եւ գրիչը հէնց այս նպատակով էլ գանց է առել վերնագրի շարունակութիւնը):

46 *Capita practica ad Anatolium*, PG. 40. Col. 1220-1244. CPG 2430; C. GUILLAUMONT, *Évagre le Pontique. Le Gnostique ou A celui qui est devenu digne de la science. Edition critique des fragments grecs. Traduction intégrale établie au moyen des versions syriaques et arménienne. Commentaire et tables* (SChr 356), Paris 1989; A., GUILLAUMONT, *Une nouvelle version syriaque du Gnostique que d'Évagre le Pontique*, «Muséon» 100 (1987), pp. 161-169; W. FRANKENBERG, *Evagrius Ponticus* (AGG, N.F. XIII, 2), Berlin 1912, pp. 546-553; *Writings of Evagrius Pontikos*, Guide to Evagrius Ponticus, J. KALVESMAKI, (ed.), 2022.

47 «... գայս արդիւնականս եւ զգիտականս թէպէտ եւ յառաջնում ոչ յիշեաց, այլ միայն զհանդերձից սրբոցն, բայց եւ գայս եւս էր յնդերեայ երանելին եւ սիրելի եղբայրն Անատոյ» (ՄՄ 1734, 26ա): «... յես առաջնոյ հաստատութեան յրատուեմ եւ հասուցանելոյ զընդունողսն մերձ յանցաւորսն եւ ի սահմանս անախտութեան՝ դարձեալ այժմ՝ զգուշացուցանէ կրկին անգամ գերկոսին կողմանս. զգիտնաւորս եւ գարդիւնաւորս» (Գրիգորի գործնական եւ արդիւնական հայոց վարդապետին համառօտարար արարեալ մեկնութիւն Եւագրեայ, ՄՄ 1734, 101ա):

48 Տե՛ս սոյն աշխ. ծնթ. 13:

49 «Եւագրեայ՝ առ Անատոյ վասն հանդերձից...», ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 22:

ներածական բաժնին վերաբերելու ձեռագրային աւանդութիւնը, միւս կողմից՝ այն փոքրիչատէ համապատասխանեցրել ենք երկիր լատիներէն անուանման հետ:

Երկիր հայերէն տարբերակը վերլուծելուց առաջ անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսքով անդրադառնալ նրա եւ «Gnosticus»-ի առնչութեանը: Ինչպէս յայտնի է, միջնադարեան հոգեւորութեան (spirituality) մէջ տեսական-հայեցողական կեանքը կամ ճանաչողական ունակութիւնները յաջորդում են գործնական-ճշգրտակարգական կեանքին եւ համարում են նրա պտուղն ու արդիւնքը: Այս պատճառով մատենագիտութեան մէջ ընդունուած է «Practicus»-ը ներկայացնել «Gnosticus»-ից առաջ: Սակայն, որոշ հայկական ձեռագրերում այս երկերը ներկայացուած են հակառակ հերթականութեամբ: Այսինքն, երբեմն «Նշանակ յԵգեկիէլէ»-ին յաջորդում է «Gnosticus»-ը, որից յետոյ միայն՝ «Practicus»-ը: Ճիշտ այս տարբերակն է ներկայացուած Հայր Բ. Սարգիսեանի հրատարակած բընագրում: Սակայն, ելնելով վերոնշեալ հանգամանքից, մենք նախ ներկայացնում ենք «Practicus»-ը, մանաւանդ որ, ինչպէս արդէն նշել ենք, նպատակադրուել ենք Եւագրի հայկական ժառանգութիւնը մատուցել հնարաւորինս համապատասխանեցուած արդի մատենագիտութեան մէջ որդեգրուած համակարգի հետ:

Սարգիսեանը ցաւում է, որ մեզ հասած ձեռագրային աւանդութեան մէջ հիմնականում «Practicus»-ի եւ «Gnosticus»-ի ճիշտ յաջորդականութիւնը փոխատեղուած է⁵⁰: Բացի այդ նա, անդրադառնալով նրան, որ Եւագրը «Practicus», «Gnosticus» եւ «Kephalaia gnostica» երկերը մտահղացել եւ թղթին է յանձնել որպէս եռագրութիւն, նշում է, որ քանի որ երրորդ աշխատութիւնը հայերէն թարգմանուել է միայն ԺԳ. դարում, այն հայոց դասական մատենագրական աւանդութեան մէջ եւ մեկնութիւններում սերտ կապ չի յայտնաբերում առաջին երկուսի հետ⁵¹: Եւագրի հայ մեկնաբանները «Practicus»-ն ու «Gnosticus»-ը դիտարկում են որպէս միմեանց լրացնող գոյգ երկեր: Այդ մեկնաբանութիւններին կանդրադառնանք յաջորդ՝ «Gnosticus»-ին նուիրուած գլխում:

50 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 12:
51 ԱՆՊ, ԼԱ.-ԼԲ.: Այս հանգամանքը պարզորոշ ցոյց է տալիս «Practicos»-ի ներածութեան վերջում Եւագրի իսկ խօսքն այն մասին, որ ստորեւ ինքը ներկայացնում է «հարիւրաւոր գլխով գարդիւնականն», ինչպէս նաեւ՝ «յիսուն եւ վեց հարիւրովն հանդերձ գգիտնականաւորսն» (ԱՆՊ, 26):

* * *

«Practicus»/«Արդիւնաւոր»ը բաղկացած է ներածական բաժնից (մեծ մասամբ՝ «Վասն հանդերձից միայնակեցաց» վերնագրով) եւ ուղիղ հարիւր փոքր գլուխներից: Բայց այն բաժանուած է որոշակի մասերի, որոնք ունեն համապատասխան վերնագրեր: Որոշ ձեռագրերում այդ վերնագրերով հատուածները ներկայացուած են իբրեւ առանձին երկեր: Բայց, ինչպէս արդէն նշել ենք, «Արդիւնաւոր»ը հէնց այն դէպքն է, որ նրա ոչ մի մասը չի կարելի համարել առանձին ստեղծագործութիւն: Ինչպէս այլ, այնպէս էլ հայերէն ձեռագրերում հանդիպող ենթավերնագրերը երբեմն բաւական պայմանական են, եւ միշտ չէ, որ համապատասխանում են իրենց յաջորդող գրութեանը: Այսպէս, մի շարք հայերէն ձեռագրերում երկիր առաջին իսկ ենթավերնագիրը («Վասն ութ խորհրդոցն») գետեղուած է ԺԵ. գլխից յետոյ, թէեւ ութ դիւական խորհուրդների մասին հեղինակը խօսում է՝ սկսած է. գլխից եւ աւարտում ԺԵ. գլխում՝ վերջին խորհրդի նկարագրութեամբ: Հայ մեկնաբանները գտնում են, որ ԺԶ. գլխից սկսում է ութ խորհուրդների յաղթահարմանը վերաբերող մասը եւ որ վերնագիրը վերաբերում է դրան: Բայց ութ խորհուրդների յաղթահարմանը նուիրուած գլուխները սկզբունքօրէն աւարտում են ԼԴ. գլխով, մինչդեռ յաջորդ ենթավերնագիրը հանդիպում է միայն ԾԳ. գլխից յետոյ: Նշանակալից է, որ մի ձեռագրում (հրատարակչի կողմից այն նշուած չէ, եւ մենք առայժմ հնարաւորութիւն չունենք ճշտելու), որը պարունակում է «Արդիւնաւոր»-ի հատուածներ՝ առանց համարակալման, որպէս առանձին երկ է գետեղուած ԼԵ. գլխից սկսուող տեքստը: Հրատարակչին այն ներկայացրել է միայն սկսուածքով⁵²: Սա բաւական կարեւոր է, քանզի, ինչպէս կը տեսնենք առջեւում ներկայացուած աղիւսակում, այս ենթավերնագիրը համապատասխանում է յունարէն բնագրով մեզ հասած ենթավերնագրին:

Նման անկարգաւոր պատկեր են ներկայացնում նաեւ Մինչի հրատարակած՝ ինչպէս յունարէն, այնպէս էլ լատիներէն տեքստերի⁵³ ենթավերնագրերը: Ինքնին հասկանալի է, թէ ինչպիսի շփոթ կարող է ներկայացնել մի ենթավերնագրից մինչեւ միւսը ընկած հատուածը իբրեւ առանձին թեմայով գրութիւն ընկալելիս, ինչը տեղի է ունեցել անցեալում ընդօրինակուած մի շարք ձեռագրերում: Այս պատճառով, ինչպէս արդէն նշել ենք, անընդունելի է

52 ԶԱՐԲԱՆԱԼԵԱՆ, էջ 423:
53 PG 40, coll. 1219-1252.

նման գրութիւնները որպէս առանձին գրական միաւոր ներկայացնելը: Արդ, շնորհիւ մեզ հասած տարբեր աղբիւրների առաւել ամբողջական համադրութեան, արդի մատենագիտութեան մէջ ընդունուել է «Արդիւնաւոր»ի հնարաւորինս ճշգրիտ բաժանումների համակարգ՝ համապատասխան ենթավերնագրերով: Ստորեւ ներկայացնում ենք աղիւսակ, որում համադրուած են հայկական ձեռագրերի եւ յունարէն բնագրի ենթավերնագրերն՝ ըստ Ա. Գիյոմոնի հրատարակութեան⁵⁴:

Աղիւսակ Գ.

«Վասն հանդերձից միայնակեցաց»	[Prologue] (9 գլուխ)
Հայերէնում 100 գլուխներից առաջ չկայ նման վերնագիր	Του αυτού λογος πρακτικος κεφαλαια ρ' 100 [Եւագրի] 100 գլուխ [Կեանքի] մասին. 100 գլուխ
«Գրիստոնէութիւն է հրաման Փրկչին» (Ա.-ԺԵ.)	100 գրիստոնէութեան սկիզբը (1-6)
	Περί τῶν ὀκτῶ λογισµῶν Ութ չար խորհուրդների մասին (7-14)
«Վասն ութ խորհրդոցն» (ԺԶ.-ԼԴ.)	Πρὸς τοὺς ὀκτῶ λογισµοὺς Ութ խորհուրդները [յաղթահարելու] շուրջ (15-33)
«Վասն պիտիցն, որոց միշտ յիշատակքն բժախտն ի մեզ կրին» (ԼԵ.-ԾԳ.)	Περί παθῶν Ախտերի (կրքերի) մասին (34-39)
	Ἐπιτομή και [Գործնական] խրատներ (40-53)
«Վասն այնոցիկ որ ընդ բուն ցնորք անցանեն» (ԾԴ.-ԾԶ.)	Περί τῶν ἐν τοῖς ὕπνοις συμβαινόντων Այն մասին, թէ ինչ է կատարում երազներում (54-56)
«Վասն հաստատութեան որ մերձ է յանախտութեան» (ԾԷ.-ԿԲ.)	Περί καταστάσεως ἐγγιζούσης τῇ ἀπαθείᾳ Անկրքութեանը մերձեցող վիճակի մասին (57-62)
«Վասն նշանակաց անցաւութեան» (ԿԳ.-Ճ.)	Περί τῶν τῆς ἀπαθείας συμβόλων Անկրքութեան նշանների մասին (63-70)
	Θεωρήματα πρακτικά Գործնական տեսումներ (71-90)
	Ῥήσεις μοναχῶν ἀγίων Սուրբ մեկնակեցանքի խօսքերը (91-100)
[Վերջաբան] (հրատ. էջ. 53-54)	[Epilogue]

54 ÉVAGRE LE PONTIQUE, *Traité Pratique ou Le Moine*, A. et C. GUILLAUMONT, (ed.), *Sources Chrétiennes*, 170-171 (Paris 1971), t. II, pp. 482-712.

«Practicus»/«Արդիւնաւոր»ի հայերէն թարգմանութիւնն ահռելի ազդեցութիւն է ունեցել ողջ հայ հոգեւոր գրականութեան եւ վանական կեանքի վրայ: Նրանում արծարծուած գրեթէ բոլոր հոգեւոր սկզբունքներն ընկալուել եւ որոշակի զարգացում են ստացել Հայոց Եկեղեցու՝ յատկապէս խորհրդապաշտ վարդապետների մօտ: Երկի հայ մեկնաբանները նկատում են, որ Եւագրը այս աշխատութիւնը յանձն է առել գրել միայն երբ «հոգեւորապէս վարժեցաւ» անապատական կեանքին⁵⁵: Արդարեւ, խոր անձնական հոգեւոր փորձառութիւնը եւ գրական ընդունակութիւնը համարելու շնորհիւ, Եւագրի խորհրդապաշտական ճանաչողութիւնները վերածուել են ազդու սկզբունքների եւ դարեր շարունակ սնուցել վանականներին ու վարդապետներին: Եթէ դիտարկենք «Արդիւնաւոր»ի բաժինները, ապա ինքնին պարզ կը լինի, թէ նրանում որքան հիմնարար սկզբունքներ են մշակուած, որոնք մեծապէս նպաստել են քրիստոնէական ճգնաւորութեան եւ առհասարակ բարեպաշտութեան ամրապնդմանն ու ծաղկմանը:

Երկը սկսում է վանականների հանդերձանքի խորհրդանիշների բացատրութիւնից, որ ներկայացնում է իւրապատուկ հոգեւոր սպառազինութիւն եւ ոչ միայն պահպանում է վանականին՝ մըշտապէս յիշեցնելով Աստուծոյ պահպանող շնորհը, այլեւ տրամադրում է մշտարթուն զգաստութեամբ մարտնչել ընդդէմ դիւային խորհուրդների: Ինչպէս գրում է Եւագրի հայ մեկնիչը, անապատականները «ոչ միայն զհոգիս մերկացին յաշխարհայնոց հեշտութեանց, այլեւ զմարմինս իսկ իւրեանց իսկապէս ի հանդերձից նոցա ի բաց եղին եւ զգեցան զհանդերձան հոգեւորականի՝ իբրեւ զգինուորս քաջազէնս եւ որպէս զըմբիշս բարեպաշտութեան»⁵⁶: Հիմնուելով այս միտուածութեան վրայ՝ Եւագրն անցնում է ճգնաւորական կեանքի հիմնական սկզբունքներին: Նա նախ անդրադառնում է քրիստոնէութեան էութեանը եւ քրիստոնեայի կոչուածութեանը՝ որպէս հոգեւոր ճանապարհի, որ սկսելով գործնական ճիգերից՝ հասնում է մինչեւ աստուածճանաչողութիւն (Ա.-Գ.) եւ շեշտում, որ այս ճանապարհը պէտք է լինի քրիստոնեայի գերագոյն նպատակը եւ խորքային ցանկութիւնն ու սէրը (Դ.-Ե.), ապա անցնում է դիւային յարձակումների դէմ անապատականի պատերազմի կամ, ըստ էութեան, ութ չար խորհուրդների եւ դրանք յաղթահարելու մասին ուսմունքի շարադրութեանը (Զ.-ԾԳ.), որը նա, ամենայն հա-

55 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 22:

56 ՄՄ 1734, 20ա:

լանականութեամբ, քաղել է Որոգինէսից եւ ինքնուրոյն դասակարգել: Եկեղեցու վարդապետները գտնում են, որ մեղանշական արատների այս դասակարգումը երկնային նուէր է տրուած մարդուն, քանի որ սոսկ մարդկային մտքի վերլուծութեամբ մենք երբէք չէինք կարող այսպիսի ճանաչողութեան հասնել: Եւագրն այս յայտնութիւնը բառացիօրէն հարստացնում եւ զարգացնում է ինչպէս իւրայատուկ դիւաբանութեամբ, այնպէս էլ՝ հոգեբանութեամբ եւ, կարելի է ասել, հոգեթերապիայով: Եթէ Ը.-ՓԵ. գլուխներում նա ներկայացնում է ութ գլխաւոր չար խորհուրդների ընդհանուր նկարագիրը, ապա յաջորդ ԺԶ.-ԼԴ. գլուխներում (յունարէնում՝ ԺԵ.-ԼԳ.) ցոյց է տալիս դրանք յաղթահարելու կերպերը: Սակայն միայն խորհուրդները յաղթահարելով չի աւարտուում քրիստոնեայի եւ յատկապէս վանականի պայքարը մեղքերի դէմ: Եւագրի յաջորդ 6 գլուխները (ԼԵ.-Խ/ԼԴ.-ԼԽ) նուիրուած են մարդկային սրտի խորքում թաքնուած կրքերի վերլուծութեանն ու վերհանմանը, իսկ յաջորդ 14ը (ԽԱ.-ՄԳ/Խ.-ՄԳ.)՝ դրանցից զգուշանալու եւ ի վերջոյ արմատախիլ անելու արուեստին: Արդ, եթէ հաշուի առնենք, որ մարդկային հոգում թաքնուած կրքերը, բոլոր դէպքերում, կարելի է դասակարգել ըստ նոյն ութ խորհուրդների, ապա ԺԶ.-ՄԳ. գլուխներն իբրեւ առանձին գրութիւն արտագրելն ու տարածելը գրչագիրների կողմից, այնքան էլ պարսակելի չէ: «Արդիւնաւոր»ի հայոց մեկնաբանը, ամփոփելով այդ մեծ հատուածը, այն այսպէս է բնութագրում. «Եղև նախ առաջին գութ խորհուրդքն եւ կրկին եւ երեկին անգամ յեղեղեալ՝ յայտնապէս խայտառակեաց զխորամանկութիւնն ևնցա եւ գայտնի եւ գաղտնի յարձակումն եւ գմուտ եւ գել. եւ մեզ ըստ կարի մերում իմաստնացուցեալ՝ հօրապէս պատրաստութեամբ զինեաց ընդդէմ ևնցա»⁵⁷:

Յաջորդ երեք գլուխները (ՄԴ.-ՄԶ.) ինչպէս հայերէնում, այնպէս էլ այլ լեզուներով ներկայացուած բնագրերում կազմում են առանձին բաժին՝ «Վասն այնոցիկ որ ընդ քուն ցնորք անցանն»: Ըստ հայ մեկնաբանի, Եւագրը, դեւերի խարդաւանքները բացառապէս յատուկ յետոյ, այս գլուխներում անդրադառնում է նրանց շատ աւելի չար ու նենգ յարձակումներին, որոնք կատարում են քնած ժամանակ. «... այժմ դարձեալ գայլ եւս չարագոյն, խոր եւ խրթին նենգութեամբ յարձակումն ևնցա մեզ ցուցանէ, գորս ո՛չ յարթութեան, այլ ի ննջման՝ ի տիւս եւ ի գիշերս գանխաբար ի միտս մեր կերպարանս եւ ձեւս գանազանս նկարեն եւ այսու գմիտս մեր օր ըստ

57 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 41:

օրէ բծաւորել ջանան»⁵⁸: Միաժամանակ երագները իւրայատուկ ստուգարք են, որով ձգնաւորը կարող է հասկանալ իր՝ ախտերից սրբուած լինելու աստիճանը, ինչը եւ նրբօրէն ուսուցանում է Եւագրն՝ ի վերջոյ նշելով, որ բացարձակ անախտութեան՝ անկրքութեան հասած անձինք գերծ են նաեւ անսուրբ երագներից:

Երկի գրեթէ կէսից Եւագրն անցնում է անկրքութեան՝ մեղանշական հակումներից գերծ հոգեվիճակի նկարագրութեանը: 6 գլուխ (ՄԷ.-ԿԲ.) նա նուիրում է այդ վիճակին մերձ գտնուելուն, իսկ յաջորդ 8 գլուխները (ԿԳ.-Հ.)՝ բուն անկրքութեան նշաններին: Հայկական տարբերակում, սկսած ԿԳ. գլխից մինչեւ վերջ, երկի 1/3-ից աւելին, վերջին ենթավերնագրի («Վասն նշանակաց անցաւորութեան») առկայութեան պատճառով, ընկալում է որպէս այդ նշանների նկարագրութիւն: Թէեւ հիմնականում երկի շարունակութիւնն իսկապէս արդէն աւելի շատ վերաբերում է անկրքութեան հասած վիճակին եւ առաքինութիւններին, սակայն կարելի է ասել, որ Եւագրն իրականում, Հ. գլխով աւարտում է անկրքութեան նշանների նկարագրութիւնը (հաւանաբար 70 թիւը Եւագրի համար խորհրդանշում է այդ բարձակէտը), եւ ՀԱ. գլխից սկսում է շարադրել հոգեւոր հայեցողութեամբ հանդերձ գործնական-ճրգնաւորական ճանապարհով բարձրանալու նրբագոյն արուեստի մասին, ինչը հասանելի եւ հասկանալի է իսկապէս որոշակի կատարելութեան եւ անկրքութեան հասնելուց յետոյ: Կարելի է ասել, որ այս բաժնում Եւագրն արդէն իսկ նկարագրում է այնպիսի հոգեւոր ճանաչողութիւններ, որոնց անդրադառնում է իր «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» («Gnostic») գրքում: Այսուհանդերձ, պայքարը շարունակում է մինչեւ մարդու վերջին շունչը, եւ դեւերը փորձում են նաեւ այս աստիճանին հասածներին: Բայց այս փուլում այդ ամէնն օժտուած է որոշակի խորաթափանցութեամբ, ինքնահայեցողութեամբ եւ առաւել նուրբ տեսանողութեամբ: Այս պատճառով էլ այս հատուածը վերնագրուել է «Θεωρήματα πρακτικά» («Գործնական տեսումներ»), որ վերաբերում է որոշակի հայեցողական ունակութեան հասած անձանց, ովքեր կարող են տեսնել, հասկանալ եւ կեանքի կոչել շարադրուած ճշմարտութիւնները:

Եւագրի բուն խօսքն աւարտում է 90 գլուխներով, քանզի երկը շարունակող 10 գլուխները քաղուածքներ են անապատական հայրերի խրատներից, որոնց յաջորդում է կարճ վերջաբան:

58 Անդ:

3. Գիտնաւոր եւ արդիւնաւոր⁵⁹

Γνωστικός η̄ Πρὸς τὸν καταξιοθέντα Γνώσεως, Gnosticus⁶⁰

«Գիտնաւոր եւ արդիւնաւոր» («Gnosticus and Practicus») անսովոր վերնագրով հայերէն թարգմանուած գրութիւնը համապատասխանում է յայտնի «Gnosticus»ին («Γνωστικός η̄ Πρὸς τὸν καταξιοθέντα γνῶσεως»), որի յունարէն բնագիրը պահպանուել է միայն մի քանի հատուածներով: Այն թարգմանուել է ասորերէն՝ 3 տարբեր խումբագրութիւններով⁶¹: Հայերէն թարգմանութիւնը կատարուել է յունարէնից՝ Ե. դարում⁶²:

Ինչպէս նշեցինք, «Gnosticus»ի հայերէն վերնագիրն անսովոր է՝ բաղկացած լինելով երկու հասկացութիւններից, որոնք, կարծես թէ, համապատասխանում են Եւագրի հէնց երկու գրութիւններին՝ «Gnosticus»ին եւ «Practicus»ին: Այս պատճառով կարելոր ենք համարում փոքր-ինչ անդրադառնալ այս խնդրին: Արդ, Ա. Գիյոմոնը նկատում է, որ Բ. Սարգիսեանի հրատարակած տեքստում «Գիտնաւոր եւ արդիւնաւոր»ը կարծես թէ հանդէս է գալիս որպէս ընդհանուր վերնագիր «Gnosticus»ի եւ «Practicus»ի համար⁶³: Այստեղից կարելի է եզրակացնել, որ չի կարելի ընդունել, թէ «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» վերնագիրը վերագրում է միայն «Gnosticus»ին, այլ՝ երկու, միմեանց յաջորդող երկրին, ընդ որում՝ արտայայտելով այն, որ հայկական աւանդութեան մէջ «Gnosticus»ը կայուն կերպով նախորդում է «Practicus»ին: Բայց նման ենթադրութիւնը ոչ միայն չի համապատասխանում իրականութեանը, այլեւ շեղում է «Gnosticus»ի այն ըմբռնումից, որ տիրապտում է թէ՛ նրա հայերէն թարգմանութեան, թէ՛ մեկնաբանական աւանդութեան մէջ: Թէեւ մեզ հասած ձեռագրերում հիմնականում այս երկերն ընդօրինակուած են նշեալ հերթականութեամբ, սակայն գոյութիւն ունեն նաեւ այնպիսի ձեռագրեր, որոնցում «Gnosticus»ը յաջորդում է «Practicus»ին: Դա է վկայում, օրինակ այն, որ Եւագրի «Լուծումն»ի հեղինակը գտնում է, որ «Արդիւնաւոր»ը («Practicus»ը) Եւագրի երկերում «է

59 Անդ, էջ 12-22:

60 CPG 2431.

61 A & C. GUILLAUMONT, *Évagre le Pontique. Le Gnostique ou A celui qui est devenu digne de la science. Edition critique des fragments grecs. Traduction intégrale établie au moyen des versions syriaques et arménienne. Commentaire et tables* (SChr 356), Paris 1989 (այլմիտն՝ GUILLAUMONT, *Le gnostique*).

62 I. HAUSHERR, *Les versions syriaque et arménienne d'Évagre le Pontique*, «Orientalia Christiana», XXII (1931), 2, pp. 100-106; GUILLAUMONT, *Le gnostique*, pp. 71-74.

63 GUILLAUMONT, *Le gnostique*, p. 21.

սկիզբն գրոցս, այլ վասն պատուոյ մարգարեական տեսլեանն՝ գ«Իմանամբ գմարդն» (այսինքն՝ Նշան. յեգեկ. – Բ. Ս.) եղ սկիզբն»⁶⁴: Այսուհանդերձ, այսպիսի՝ բնագրին աւելի հարագատ դասաւորութեամբ ձեռագրերում էլ «Gnosticus»ի վերնագիրը նոյնն է. «Գիտնաւոր եւ արդիւնաւոր»: Այստեղից պարզուել է, որ հայերէնում այսպիսի անուանումը ոչ թէ վերաբերում է երկու երկերին, այլ հէնց «Gnosticus»ին: Իհարկէ, չի կարելի բացառել, որ այսպիսի «անուանափոխութեան» պատճառը պատահական բնոյթ կրի (զուտ պատահականօրէն առաջացած նման երեւոյթ է արձանագրուել, օրինակ, նաեւ ասորերէն թարգմանութեան մէջ)⁶⁵, սակայն հայոց մատենագրութիւնն ընդհանուր առմամբ ցոյց է տալիս, որ «Gnosticus»ի հանդէս գալը «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» վերնագրով բաւական հին եւ կայուն աւանդութիւն է:

Արդ, կարելի է ենթադրել, թէ սա վկայում է այն մասին, որ հաւանաբար ի սկզբանէ հայ թարգմանչի կողմից «Gnosticus»ն ընկալուել է ոչ թէ իբրեւ գործնական-ճգնաւորական կեանքի արդիւնքում ձեռք բերուող նոր հոգեւոր աստիճան, այլ՝ միաժամանակ տեսական եւ գործնական կեանքերին վերաբերող երկասիրութիւն: Իսկ այն հանգամանքը, որ այս վերնագրի մէջ տեսականը ոչ թէ յաջորդում, այլ նախորդում է գործնականին (բացի մէկ ձեռագրից, որում այս վերնագրի բառերը ներկայացուած են հակառակ հերթականութեամբ՝ «Արդիւնաւոր եւ գիտնաւոր»)⁶⁶, առիթ է տալիս մտածելու, որ թարգմանչի համար gnosisն ընկալում է որպէս գործնական կեանքի տեսական նախահիմք՝ ո՛չ թէ ըստ «դասական»-ճգնաւորական, այլ առաւել՝ ըստ ռացիոնալիստական աւանդութեան:

Պէտք է նշել, որ հէնց այդպիսին է այս երկի այսպէս կոչուած «Լուծումն»ի հեղինակ Գէորգ Երզնկացու (ԺԴ.-ԺԵ. դարեր) մեկնաբանութիւնը: Թերեւս ելնելով նշեալ վերնագրից՝ նա երկին տալիս է որոշակի ռացիոնալիստական բնոյթի բացատրութիւն. «Գիտնական՝ գտեսական առաքինութիւնսն աւէ, եւ արդիւնաւոր՝ զգործնական առաքինութիւն»⁶⁷: «Տեսական առաքինութիւն» ասելով՝ «Լուծումն»ի հեղինակն ի նկատի ունի ոչ թէ հայեցողական կեանքը, այլ տեսական-ճանաչողական կրթութիւնը, որ, որոշակի առումով, նախորդում է գործնականին ա) որպէս դաւանա-

64 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 24:

65 GUILLAUMONT, *Le gnostique*, p. 20.

66 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ ԽԳ:

67 Անդ, էջ 13:

կան հիմք՝ «[գի] ուղղափառք ուսցին յինքեցեալ եւ ուսուցեցն հաւատարիմ մարդկան»։ Բ) որպէս հոգեւոր-ճգնաւորական գրուածքների տքնաջան ուսումնասիրութիւն՝ «գի խոնջեալ միայնակեացքն ուսցին ի բազում ընթեռնույն, եւ մանաւանդ ուսցին յարդեանց եւ ի նգնութեանց իւրեանց»։ Գ) որպէս, անձնական կրթութիւնից բացի, անգէտներին կրթելուն նպաստող պայման՝ «գի վարդապետք ուսցին եւ այլոց ուսուցանիցեցն, եւ մի՛ տխմարագոյնքն արհամարհեցցին»⁶⁸։ Եւ այսպէս, «Լուծմունք»ի հեղինակը ո՛չ միայն բացատրում է երկի «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» անունանման պատճառը, այլեւ կարծես թէ, անուղղակի կերպով, հիմնաւորում է «Gnosticus»ը «Practicus»ից առաջ գետեղուած լինելը։ Թէեւ նա կարեւորում է սեփական ճշգնութիւնից ուսանելով՝ ճանաչողութեան հասնելու հանգամանքը, բայց ակներեւ է ռացիոնալիստական մօտեցումն, ըստ որի՝ «Gnosticus»ը ո՛չ թէ նուիրուած է հոգեւոր ճգնութիւնների արդիւնքում ձեռք բերուած նոր, շնորհական աստիճան ունեցողներին, այլ՝ տեսական աշխատանքով եւ ինքնակրթութեամբ զբաղուողներին։

Սակայն կարելի է ասել, որ նման ըմբռնումը Հայոց Եկեղեցում մասնակի երեւոյթ է եւ յատուկ է եղել ուշ միջնադարին, քանզի աւելի վաղ՝ ԺԲ. դարում ստեղծուած մեկնաբանութեան մէջ տեսնում ենք առաւել աւանդական ըմբռնում։ Ինչպէս նշել ենք վերեւում, Գրիգոր Մեկնիչը գտնում է, որ «Արդիւնաւոր»ը Եւագրի երկերի սկիզբն ու հիմքն է⁶⁹։ Աւելին, նա յատուկ կերպով «Գիտնաւոր եւ արդիւնաւոր»ը դիտարկում է որպէս «Արդիւնաւոր»ի շարունակութիւն, որ Եւագրը գետեղում է «յետ առաջնոյ հաստատութեան խրատուն եւ հասուցանելոյ զընդունողսն մերձ յանցաւորսն եւ ի սահմանս անախտութեան»⁷⁰։ Այսինքն, ըստ Գրիգորի, Եւագրը «Gnosticus»ը մտալոյցել է իբրեւ շարունակութիւն՝ մինչ այդ ցոյց տրուած ճանապարհի, որում մենակեացը հոգեւոր աճ է ապրում՝ սկսած կրքերի դէմ նախնական պայքարից՝ մինչեւ բացարձակ անկրքութիւն։ Ինչպէս տեսնում ենք, Գրիգոր Մեկնիչը քաջատեղեակ է հոգեւոր կեանքի գործնական եւ տեսական կողմերի ճգնաւորական աւանդոյթին, որում երկրորդը հասունանում է առաջինից։ Այսուհանդերձ, նրա համար գործնական կեանքի կատարելութեան աստիճանից յետոյ մատուցող սուրբալ գրութիւնն ընկալում է, ըստ հայերէն թարգմանութեան, երկու հասկացութիւններից կազմուած՝ «Գիտնաւոր եւ արդիւնաւոր» վերնագ-

68 Անդ:
69 Անդ, էջ 24:
70 Անդ, էջ 12-13:

րի։ Քանզի, ըստ մեկնիչի, այդ երկը իւրօրինակ խրատական խօսք է, որով Եւագրը «դարձեալ այժմ գգուչացուցանէ կրկի՛ն անգամ գերկոսին կողմանսն. զգիտնաւորս եւ զարդիւնաւորս։ Զնա, որ դեռ զարդիւնական կատարէ՝ թէ որպէս պարտի առնել եւ վարել զինքն անսայթափ՝ խրատով գիտնականին, եւ զգիտնականն, դարձեալ՝ թէ որով օրինակաւ պարտ է վարել զկեանս իւր. նա՛ եւ խրատել զայնս որ իբր գտովեալս աստուածգիտութեան հացին առ նա ի խրատ եկեացեն»⁷¹։

Այսպիսով, ինչպէս առաջին թարգմանիչների եւ գրիչների, այնպէս էլ մեկնաբանների ընկալմամբ, «Gnosticus»ը հայոց մատենագրական աւանդութեան մէջ, սկսած իր վերնագրից, ընկալում է երկու՝ տեսական եւ գործնական կողմերով եւ, ըստ մեկնաբանների, «Practicus»ից տարբերում է ոչ թէ նրանով, որ, ի տարբերութիւն նրա, հեղինակն այն նուիրում է արդէն զուտ տեսական-հայեցողական կեանքի բարձրագոյն իմաստներին (ինչպիսին կարելի է համարել «Kephalaia gnostica»ն), այլ նրանով, որ անդրադառնում է այս երկու՝ գործնական եւ տեսական կողմերի ներքին կապակցուածութեանը։ Եւ իսկայպէս, Եւագրն այս երկի սկզբում իսկ անդրադառնում է նրան, թէ ինչպիսին պէտք է լինեն գործնական ճանապարհն անցնողի եւ տեսականին հասածի ճշմարիտ փոխարաբերութիւնները, որից յետոյ հանդէս է գալիս տեսական կեանքով ապրողին հասցէագրուած այնպիսի խրատներով, որոնք վերաբերում են ո՛չ միայն նրան, թէ նա ինչ իմաստութեամբ պիտի վարուի իր մօտ եկածի հետ, այլեւ նրան, թէ ինչպէս պէտք է ձգտի չթուլացնել իր գործնական եւ բարոյական նախահիմքերը։ Այս առումով, բաւական հասկանալի եւ ընդունելի է այն, որ հայերէն թարգմանութեան մէջ Եւագրի այս երկի վերնագիրը, ինչ պատճառով էլ նման փոփոխութեան ենթարկուած լինէր, համարուել է տեղին եւ բնական՝ համապատասխան կերպով ընկալուելով նաեւ մեկնաբանների կողմից։

Երկի այսպիսի ըմբռնումը մօտ է Գիյոմոնի այն կարծիքին, որ «Gnosticus»ը ներկայացնում է իւրայատուկ անցումային փուլ «Practicus»ի եւ «Kephalaia gnostica»ի միջեւ եւ վերջինիս համար, «ըստ երեւոյթի, հանդիսանում է որպէս ներածութիւն»⁷²։ Ուշագրաւ է, որ հնագոյն ասորական ձեռագրերում «Gnosticus»ն անմիջապէս յաջորդում է «Practicus»ին՝ շարունակելով գլուխների թուարկումը եւ, փաստօրէն, երկու երկերն ընկնում են մէկ ընդհանուր վեր-

71 Անդ, էջ 13:
72 GUILLAUMONT, *Le gnostique*, p. 18.

նագրի ներքոյ⁷³, ինչով, փաստորէն, ընդգծւում է «Gnosticus»ի անմիջական առնչութիւնը գործնական գլուխների հետ:

* * *

Ա. Գիյոմոնը «Gnosticus»ում տեսնում է որոշակի կառուցուածքային բաժանումներ: Ըստ նրա՝ Ա.-Գ. գլուխները բնութագրում են գիտնաւորի հիմնական գործառնութիւնը. Դ.-ԺԱ. գլուխներում ցոյց են տրուած այն նախապայմանները, ըստ որոնց նա կարող է ուսուցանել. ԺԲ.-ԺԵ. գլուխներում նշուում է այն մասին, որ գիտնաւորը պէտք է յարմարուի իր ունկնդիրներին. ԺԶ.-ԻԱ. գլուխները նուիրուած են նրան, թէ գիտնաւորը յատկապէս ինչ պէտք է ուսուցանի. ԻԲ.-ԼԶ. գլուխներում Եւագրը խօսում է, թէ ինչպէս է պէտք ուսուցանել. ԼԷ.-ԽԳ. գլուխներում զգուշացուում է գիտնաւորին սպասուող փորձութիւնների մասին. ԽԴ.-ԽԼ. գլուխները բովանդակում են գիտնաւորի գործունէութեանը վերաբերող մէջբերումներ՝ նշանաւոր հայրերից. ԽԹ.-Ծ. գլուխներն ամփոփում են աշխատութիւնը⁷⁴:

Սենք կը փորձենք, երկի հայերէն թարգմանութեան քննական բնագիրն ու նրա վերլուծականը ներկայացնելուց առաջ, այստեղ, ըստ Գիյոմոնի սխեմայի, փոքրիշատէ գիտարկել «Գիտնաւոր եւ արդիւնաւոր»ի իւրաքանչիւր բաժնի գլխաւոր սկզբունքները՝ համաձայն հայերէն թարգմանութեան եւ այն լոյսի ներքոյ, որ մեզ ընձեռում է երկի հայոց մեկնողական աւանդութիւնը:

Ա.-Գ.

Այս գլուխները, հանդէս գալով որպէս բուն նիւթի ներածական եւ գիտնաւորի գործունէութեան ընդհանուր բնութագիր, միաժամանակ նկարագծում են քրիստոնեայի հոգեւոր կեանքի ողջ ընթացքը, հոգեւոր կեանքի սկիզբն ու աւարտը՝ ալֆան եւ օմեգան:

Եթէ առաջին գլուխը միանգամայն վերաբերում է երկուսին՝ գործնականին եւ տեսականին եւ, ըստ հայկական տարբերակի, ցոյց է տալիս նրանց էական փախկապակցուածութիւնը, ապա յա-

73 FRANKENBERG, W., *Euagrius Ponticus*, Berlin 1912, pp. 546-553 (հղումն՝ ըստ Գիյոմոնի, ծնթ. 6):

74 GUILLAUMONT, *Le gnostique*, pp. 41-42.

ջորդ երկու գլուխներից առաջինը բնութագրում է գործնականի, իսկ երկրորդը՝ տեսականի հիմնական իմաստն ու նպատակը:

Դ.-ԺԱ.

Ընդունելով, որ սկսած Դ. գլխից խօսուում է գիտնաւորին պատշաճող նախապայմանների կամ, այլ կերպ ասած՝ նրան իբրեւ ուսուցանող հանդէս գալու պահանջների մասին, կարող ենք ասել, որ այս գլուխը բնութագրում է այդ պահանջների ամենաընդհանուր հիմքը: Դա այն է, որ սկզբունքորէն գատում է ճշմարտութեամբ մաքրուած եւ դրա շնորհիւ ստացած շնորհական գիտութեան լոյսը՝ բնական կամ նիւթեղէն ճանաչողութիւնից ձեռք բերուած գիտելիքներից: Արդ, եթէ արտաքին գիտելիքի կայունութեանը սպառնում է մոռացութիւնը, ապա շնորհականին հակացուցուած են ցասումն ու բարկութիւնը՝ իրենց զարգացմամբ եւ հետեւանքներով: Այստեղից էլ՝ յաջորդ պահանջ-նախապայմանները. գիտնաւորը պէտք է ըստ ամենայնի սպառազինուի ընդդէմ ցասման ոգու (Ե.-Զ.) եւ իր անձն օժտի ներողամտութեամբ ու անոխակալութեամբ, ողորմածութեամբ ու համբերութեամբ (Է.-Ժ.): Անբարկութիւն եւ մեծ համբերատարութիւն պահպանելը իւրապատուկ խնամք են՝ ձեռք բերուած ճանաչողութեան համար, որպէսզի մի կողմից այդ շնորհը չընդհատուի, միւս կողմից՝ ձեռք բերուած ճանաչողութիւնն առաւելագոյնս օգտակար լինի մերձաւորներին: Ըստ Եւագրի, գիտնաւոր եւ այլոց խրատող լինելու նախապայմաններից է նաեւ երբեք նախադարձակ չլինելը եւ, առանց իրեն տրուած հարցի, չուսուցանելը (ԺԱ.): Այս պայմանը միաժամանակ անցում է երկի յաջորդ խմբին՝ որում շօշափուում են գիտնաւորի՝ իր ունկնդրի հետ յարաբերուելու սկզբունքները:

ԺԲ.-ԺԵ.

Ըստ Գիյոմոնի, այս գլուխների հիմքում ընկած է ունկնդրի հետ յարմարուելը: Բայց, իհարկէ, խօսքն այն մասին չէ, որ ունկնդիրը թելադրի իր նախասիրութիւնները, այլ այն իմաստուն գիծողութեան, որով գիտնաւորը ձգտում է ամէն ինչ անել յօգուտ ունկնդրի հոգեւոր շահի՝ ելնելով նրա անհատական խնդիրներից, այլ ո՛չ թէ ուսուցանի ըստ իր ընդհանուր գիտելիքների եւ ճանաչողութեան: Ընդ որում, պահանջուում է գննել եւ հաշուի առնել, թէ այցելու/ունկնդիրը որքանով է ուշադիր եւ լրջմիտ, ինչպիսին է եղել նրա անցեալը եւ ինչպիսին է ներկան, եւ այս ամէնի հիման վրայ յանձն առնել ուսուցանութիւնը:

ԺԶ.-ԻԱ.

Յաջորդ խումբը բովանդակում է ուսուցանութեան բուն ցուցակը, որը, թէեւ պէտք է համապատասխանի որոշակի անձի եւ բմի վերոնշեալ սկզբունքներին, բայց այնուամենայնիւ ունի իր ընդհանուր համակարգը, ինչպէս նաեւ՝ իր մեթոդական նրբութիւնները: Յատկանշական է, որ այստեղ Եւագրը յորդորում է յստակեցնել, թէ այցելուի հարցերը ո՞ր ոլորտին են վերաբերում (արդիւնակա՞ն, բարոյակա՞ն, թէ՞ աստուածաբանական) եւ ցոյց է տալիս, թէ իւրաքանչիւրն ինչպիսի նրբութիւններ է պարունակում, որոնք գիտնաւորը պէտք է կիրառի: Բայց այս մեթոդաբանութեան մէջ նա խիստ կարեւորում է սուրբգրային վկայութիւններ մէջբերելը:

ԻԲ.-ԼԶ.

Այս 15 գլուխները նուիրուած են նրան, թէ ինչպէս պէտք է ուսուցանել կամ, այլ կերպ ասած, ուսուցանելիս գիտնաւորն ինչպիսին պէտք է լինի, որ վերաբերում է ոչ միայն նրա արտաքին պահուածքին, այլեւ՝ ներքին ուղիմութեանը, որ պէտք է պահպանել ուսուցանելիս: Ամէնից առաջ Եւագրը զգուշացնում է խոթող ու տրտում եւ կամ դժկամ արտայայտութիւն ունենալուց, որպէսզի չզայթակղի այցելուին: Նա յորդորում է նախ ուշադիր զննել սեփական հոգին՝ բացառելու համար, որ իրեն ուսուցանել դրդեն այնպիսի ներքին, ծածուկ միտումներն, ինչպիսին են շահախնդրութիւնն ու ինքնահաստատումը (ԻԴ.): Ուսուցանողից պահանջուում է նաեւ ամենեւին տեղիք չտալ հակառակութեան ոգով բռնուածներին (ԻԵ.) եւ չարախօսողներին (ԼԲ.)՝ անմիջապէս ընդհատելով նրանց եւ բնաւ չմտնելով վիճաբանութեան մէջ: Պատանիների հետ զրուցելիս պէտք է խոսափել խոր գիտելիքներ հաղորդելուց (ԻԶ.), իսկ ծերերին պէտք է խրատել առաւել զգուշանալ շնչաւոր փորձութիւններից, մանաւանդ՝ բարկութեան խորհրդից (ԼԱ.): Եւագրը յորդորում է զգուշանալ աներկիւղ աստուածաբանելուց եւ Աստուածութիւնը սահմանելուց, որքան էլ պատշաճ թուայ ունկնդրին Նրա մասին այդպէս բացատրելը (ԻԷ.): Գիտնաւորի համար խիստ կարեւոր է իր խօսքը շարադրել դիպուկ ու ըստ տուեալ պահի անհրաժեշտութեան եւ զգուշանալ տրուած հարցի հետ առնչուող իր ծաւալուն գիտելիքները շարադրելով՝ խօսքը խիստ ընդարձակելուց (ԼԴ.): Պէտք է զգուշանալ նաեւ վանականներին գովեստով սնափառութեան դրդելուց (ԼԵ.), իսկ աշխահականներին՝ դժոխքի տանջանքներով չափից դուրս զարհուրեցնելուց (ԼԶ.):

ԼԷ.-ԽԳ.

Եւագրն իր ուսմունքի վերջընթեր եօթ գլուխները նուիրում է գիտնաւորին պատահող փորձութիւններին եւ դրանց դիմակայելու համար անհրաժեշտ գործառնութիւններին: Նա, որոշակի առումով, «վերադառնում» է «Արդիւնաւոր»ին կամ գիտնաւորին անհրաժեշտաբար ուղեկցող այն գործնական կողմին, որը չի կարող իսպառ դադարեցնել, քանզի, քանի դեռ հոգին մարմնի մէջ է, ենթակայ է մարմնական փորձութիւնների: Այնուհետեւ Եւագրը կոչ է անում ուշադիր լինել խղճի ձայնին եւ խորամուխ լինել խղճի խայթ առաջ բերող բազում նախապատճառների մէջ (ԼԹ.-Խ.): Նշանակալից է զգուշացումը նաեւ իմացական բնոյթի փորձութիւնից՝ ճանաչողութեան մարդկային կերպերն Աստուածութեան հանդէպ կիրառելուց եւ չմոռանալով, որ Նրա ճանաչումը վեր է դրանից (ԽԱ.): Թերեւս հէնց այս իմացական յանդգնութիւնից են բխում աստուածաբանական սխալներն ու հերձուածները, եւ Եւագրը գիտնաւորին այցելած փորձութիւն է համարում նման ծագում ունեցող սուտ կարծիքի յայտնուելը մտքի տեսահորիզոնում (ԽԲ.), եւ նրա կոչուածութեանը հասցուած լուրջ վնաս՝ նման կարծիքն անզգուշաբար իբրեւ ճշմարտութիւն ուսուցանելը (ԽԳ.):

ԽԴ.-ԽԸ.

Այս 5 գլուխներում Եւագրը մէջբերումներ է կատարում նշանաւոր հայրերից: Ուշագրաւ է, որ նա ճիշտ այդպիսի մեթոդ է կիրառել «Արդիւնաւոր»ում՝ երկի վերջընթեր մասում՝ խօսքի ճիշտ 1/10 մասը յատկացնելով հեղինակաւոր հայրերի ասոյթներին:

Առաջին մէջբերումը ս. Գրիգոր Աստուածաբանի խօսքերն են չորս գլխաւոր առաքինութիւնների մասին: Յաջորդը ս. Բարսեղ Կեսարացու խօսքան է երկու՝ բնական-մարդկային եւ շնորհական-աստուածային գիտութիւնների մասին, որոնք հակադիր են միմեանց: Բայց առաջինը, հասանելի լինելով դեռեւս չարբագործուած անձանց, անխուսափիւրէն նախորդում է երկրորդին եւ կարեւորում է ինքնակրթութեան եւ աղօթքի մէջ հաստատուելու համար: Մինչդեռ երկրորդը, որ տրուում է անբիծ մաքրութեան հասածներին, պահպանում է աստուածատուր արդարութեամբ եւ անբարկութեամբ: Երրորդ մէջբերումը ս. Աթանաս Ալեքսանդրացուց է, որն անուղղակի կերպով վերաբերում է փորձութիւնների դէմ արիաբար եւ անտրտունջ մարտնչելուն, ինչը հանգեցնում է աւելի մեծ շնորհների եւ հոգեւոր ճանաչողութեան: Յաջորդ մէջ-

բերումը վերաբերում է միաժամանակ ե՛լ հոգեւոր ճանաչողութեան վեհութեանը, ե՛լ, դարձեալ, բարկութեան փորձութեան յաղթահարմանը: Այս անգամ շեշտուում է հոգեւոր հայեցողութեան սրբարար ազդեցութեան մասին:

Մէջբերումով ներկայացուած վերջին՝ հինգրորդ գլուխը վախճանաբանական է: Ինչպէս նախորդ մէջբերումով գլուխները, այնպէս էլ այս՝ ԽԸ. գլուխը նուիրուած է անձամբ գիտնաւորին, այլ ո՛չ թէ նրան հարցերով դիմողներին ուսուցանելու սկզբունքներին (ինչպիսին է երկի հիմնական բովանդակութիւնը): Բայց այն իւրայատուկ անդրանցում է մինչեւ այժմ շոշափուած բոլոր թեմաներից: Բացի այն, որ խիստ բնական է, որ վերջին խօսքը վերաբերի վերջին իրողութիւններին, ահեղ դատաստանը յիշելու բարեպաշտական սկզբունքը տիրապէս վերաբերում է թէ՛ արդիւնաւորին, թէ՛ գիտնաւորին, իսկ նրա մոռացումը երկուսի համար էլ կարող է անկման պատճառ լինել:

ԽԹ.-Ծ.

Երկն ամփոփում են երկու գլուխներ: Առաջինով Եւագրը վերստին նշում է դեռեւս «Արդիւնաւոր»ի սկզբում իր ուսուցանած գործնական, բարոյական եւ աստուածաբանական սկզբունքները՝ այս եռակարգ ուսմունքն այստեղ շարադրելով հակիրճ, բայց զարմանալի պարզութեամբ. «Զի կէտ նպատակի արդիւնաւորականաց է սրբել զմիտսն իւր եւ պատրաստել առ ամենայն բիծ եւ արատ: Իսկ բարոյականաց՝ որ յամենայն իրս ուղղեալս ցուցանել զծածկեալ մըշմարտութիւնն: Իսկ զատանել զմիտսն ի հիւսնիւսնաց անտի եւ ի նոյն դարձուցանել՝ առաջինն իշխէ, այլ աստուածական գիտութեան զօրութեան է պարգեւն»⁷⁵: Իսկ վերջին գլուխում Եւագրը նախ վերահաստատում է նախորդ գլխի վերջում արծարծուած սկզբունքը (ձերբազատուելով նիւթեղէն տպաւորութիւններից՝ հայելող գոյի Սկզբնապատճառին), ապա յորդորում, որ գիտնաւորը, այս անդրանցական հայեցողութիւնից ստացած հոգեւոր խորհուրդները նկարի, այսինքն տպաւորի իր հոգում:

Շարունակելի

ՅՈՎՍԷՓ ՔԶՆՅ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Summary

THE WORKS OF EVAGRIUS PONTICUS
IN THE ARMENIAN CLASSICAL
TRANSLATION LITERATURE

FR. HOVSEP KARAPETYAN

This study aims to present the entirety of St. Evagrius Ponticus' literary legacy as preserved in classical Armenian literature. In the past, such an initiative was undertaken by Mekhitarist scholar Fr. Parsegh Sarkissian, who published comprehensive comparative texts of all works attributed to Evagrius based on the manuscripts available to him. The scholarly priest devoted over 180 pages to an extensive introduction and research, which remains relevant in many respects even today.

However, the Armenian translations of Evagrius' works now demand fresh, meticulous study. Since Sarkissian's publication, new Greek texts and sources in other languages have come to light. Several prominent scholars of manuscript studies have elevated the standards of comparative studies of Evagrius' writings, including their Armenian translations. Consequently, modern studies have outlined a comprehensive view of Evagrius' literary corpus, incorporating his Armenian translations.

Nevertheless, this aspect remains incomplete. To this day, the primary resource for researchers continues to be Sarkissian's publication, which no longer fully addresses certain contemporary scholarly questions. There is now a pressing need to integrate an accurate depiction of Evagrius' Armenian legacy into the global framework of Evagrian studies. As we shall see, for several reasons, this legacy has a distinct character.

This work is essentially dedicated to completing this picture. New critical texts of Evagrius' works have been prepared, based on the comparison of numerous manuscripts. Efforts have also been made to compare the Armenian translations with the extant Greek and Syriac writings, aiming to reveal the unique features of the Armenian versions. These features, we believe, stem from specific

75 ՍԱՐԳԻՍԵԱՆ, էջ 21-22:

doctrinal tendencies. Additionally, English translations of the critical texts are being prepared, which is important for accurately representing the Armenian segment of Evagrian studies within the broader global context.

This study also includes works that were previously attributed to St. Nilus of Sinai (and thus excluded from Sarkissian's publication) but have been conclusively identified in more recent manuscript studies as the works of Evagrius.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆԸ՝ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՀԱՍՈՒԹԵԱՆ ՈՒ ՄԵԿՆՈՐՈՇՄԱՆ ԳԻՏԱ-ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐ ԿԱՏԱՐՈՒՄ ՍՈՒՐԲ ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՄԵԿՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Ա.- ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՀԱՍՈՒ ՄԵԿՆԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ՈՒ ՊԵՐՃԱԽՕՍ ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ ՈՒՆԿՆԴՐԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՆԱՐՈՒԵՍՏՈՒՄ

Ս. Օգոստինոսի բանայայտմամբ՝ իր «Քրիստոնեական գիտութիւն»¹ մեկնագիտական (հերմենեւտիկական) երկի բուն դիտաւորութեան ու ըստ այդմ՝ կերպարանման ու կատարումի խնդրակարգը երկբաղադրեալ է. առաջին՝ ի՛նչպէս կամ ի՛նչ եղանակով գտնել (հասկանալ) Սուրբ Գրոց ճշմարիտ իմաստը եւ երկրորդ՝ ի՛նչպէս կամ ի՛նչ եղանակով արդէն գտնուած իմաստը հաղորդել այլոց²:

Նա իր մեկնագիտական հայեցակարգը ներկայացնող այդ աշխատութիւնում վերոբանաձեւեալ երկհարցադրութեամբ, ըստ էութեան, առաջադրում ու մեկնողաբար իմացայայտում է երկու հիմնախնդիր, առաջին՝ ի՛նչպէս հասկանալ Սուրբ Գրոց ասացելի ստոյգ իմաստը, եւ երկրորդ՝ ի՛նչպէս այն մեկնաբանել՝ հասկացուած իմաստը մեկնորոշմամբ հաղորդել այլոց: Իր մեկնագիտութեան առաջնապատակ հիմնախնդրին՝ Սուրբ Գրոց ստոյգ իմաստը

1 Գրաբար հայերէնով առակել Յշգրտութեամբ հնարաւոր է այն խորագրել՝ «Յաղագս Քրիստոնեական գիտութեան»:
2 Блаженный АВГУСТИН, Христианская наука, или Основания св. Герменевтики и церковнаго красноречія, Кіев 1835, с. 13.